

7094

3472

2-22

ՀԱՄ Կ (Բ) Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱՁԵՎԵՐԸ



629115(47)
2/22

14 NOV 2009

Պրպետարներ թուր յերկրների, միացե՛ն

3502
2-22

५

1934 թ. հունվարի 26 — փետրվարի 10

30424

72

ԿՈՒՍԱԿՑՄԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1934

21752... CCFA

[illegible]

Խանձնված է արտադրության 9 հուլ. 1934 թ.
ստորագրված է տպագր. 22 հուլ. 1934 թ.

I

II

31 հունվարի 1934 թ.

III

ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ
ԸՆԿ. ՌՈՒՋՈՒՏԱՍԿԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ՝
ԿՎՀ—ԲԳՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ԸՆԴՈՒՆՎԱՅ Ե ՄԻԱԶԱՅՆ)

Լսելով ընկ. Ռուճուտակի հաշվետու ղեկավար՝
Համ Կ(բ)Կ XVII համադրումարն ամբողջովին հաժա-
նություն ե տալիս ԿՎՀ—ԲԳՏ գործունեյությանը:

1 փետրվարի 1934 թ.

IV

ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ
ԸՆԿ. ՄԱՆՈՒԻԼՍԿՈՒ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ՝
ՀԱՄԿ(Բ)Կ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԿԻԳԿ-ում,

(ԸՆԴՈՒՆՎԱՅ Ե ՄԻԱԶԱՅՆ)

Լսելով Կոմինտերնի Համ Կ(բ)Կ պատգամավորու-
թյան հաշվետվությունը՝ Համ Կ(բ)Կ XVII համադրու-
մարն ամբողջությամբ ու լիովին հավանություն ե տա-
լիս Կոմինտերնի Համ Կ(բ)Կ պատգամավորության
քաղաքական դժին և գործնական աշխատանքին:

2 փետրվարի 1934 թ.

V

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԴԻԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ (1933—1937 թ. թ.)

ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ ԸՆԿ. ԸՆԿ Վ ՍՈՒՆՈՎԻ
ԵՎՎ. Վ. ԿՈՒՅԵՐՇԵՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված ե միաձայն)

Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարով արդեն
առաջին հնգամյակի ընթացքում կառուցված ե սոցիա-
լիստական եկոնոմիկայի հիմքը, ջախջախված ե կապի-

նախադասական վերջին դասակարգը— Կուլակաթյունը,
խաչ գյուղացիության հիմնական մասսաները— կոլ-
տնտեսականները— խորհրդային իշխանության հաստա-
տուն հենարանն են դարձել գյուղում: ԽՍՀՄ-ն վերջ-
նականապես ամրացել ե սոցիալիստական ուղի վրա:

Առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ-ում կա-
ռուցվել ե տեխնիկական առաջավոր խոշոր արդյունա-
բերություն, ըստ վերում առանձնապես նշանակելի հա-
ջողություններ են ձեռք բերված ժամանակակից ծանր
ինդուստրիայի— սոցիալիզմի նյութական բաղադրիչ, ժո-
ղովրդական վողջ տնտեսության վերակառուցման հիմ-
քի և թեթև ու սննդի արդյունաբերության և գյուղա-
տնտեսության արագաթափ դարձացման պայմանի
ստեղծման գործում: Վերստին կազմակերպված են ար-
տադրության տասնյակ նոր ճյուղեր՝ բարդ դաղգյա-
հաշինություն, ավտոմոբիլային ու տրակտորային ար-
դյունաբերություն, կոմբայնաշինություն, ինքնաթիռ-
և ավիոմոտորաշինություն, հզոր տուրբիններ և գենե-
րատորների արտադրություն, բարձրորակ պողպատ-
ներ, ֆերրո-ձուլվածքների, ալյումինի արտադրու-
թյուն, ժամանակակից քիմիական արդյունաբերու-
թյուն, սինթետիկ կաուչուկի, ազոտի, արհեստական
թելուկի արդյունաբերություն և այլն: Ժամանակակից
տեխնիկայի հիման վրա վերակառուցված են տրիկո-
տաժի, կարի, կոշիկ, մսի, պահածոների, թղթի ար-
դյունաբերությունը և այլն: Կառուցվել են հազարավոր
առաջավոր ձեռնարկություններ, վորոնք գտնվում են
կապիտալիստական տեխնիկայի բազմաթիվ նմուշների
մակարդակին և ժողովրդական ամբողջ տնտեսությունը
փոխադրում են նոր տեխնիկական կուլտուրայի բարձր
աստիճանին:

Առաջին հնգամյակում արմատապես վերակառուց-
վել ե գյուղատնտեսությունը: Լենինյան կուսակցու-
թյան հողից գեկալարվող պրոլետարիատը միլիոնա-
վոր գյուղացիներին համոզեց կոլեկտիվ արտադրու-
թյան պատկերավոր մեջ և կոլտնտեսային նոր կարգ

ստեղծեց գյուղում: Արդյունաբերութեան զարգացման
ասպարիզում ձեռք բերված հաղթանակները պայմանա-
վորեցին այն հսկայական հաջողությունները, վոր մենք
ունեցանք գյուղատնտեսությունը մեքենայական տեխ-
նիկայի ռելսերի վրա փոխադրելու ուղղությամբ:
ԽՍՀՄ-ն դարձավ աշխարհում ամենախոշոր գյուղա-
տնտեսության յերկիրը:

Աշխատանքի նոր, սոցիալիստական կարգապահու-
թյան ստեղծման գործում ձեռք բերված խոշոր հաջո-
գությունները, բանվորների վորակավորման բարձրա-
ցումը, արտադրութեան կազմակերպման բնագավառում
ձեռք բերված զգալի նվաճումները հնարավորություն
տվին տեխնիկական վերակառուցման ընթացքում հրա-
կայական հաղթանակներ ձեռք բերել աշխատանքի ար-
տադրողականութեան բարձրացման գործում: Աշխա-
տանքի արտադրողականութեան աճման տեմպերի տե-
սակետից ԽՍՀՄ-ն իր հետեն ե թողել բոլոր կապիտա-
լիստական յերկրներին՝ նույնիսկ նրանց բարձրագույն
վերելքի տարիների համեմատությամբ:

Պրոլետարիատը, հաղթահարելով հնգամյա պլանի
կենսադործումից բխող հսկայական դժվարություն-
ները, պատմական նշանակութուն ունեցող հաղթա-
նակներ ձեռք բերեց քաղաքի և գյուղի աշխատավորու-
թյան գրությունը բարելավելու գործում: Խորհրդային
հասարակարգի առավելություններն արդեն իսկ զար-
գացման ձեռք բերված աստիճանում հնարավորություն
տվին լիովին վերացնելու գործազրկությունը, յոթա-
մյա աշխատանքային որ մտցնել, վոչնչացնել աղքա-
տացումն ու պատկերիզմը գյուղում:

Բանվորն ու կոլտնտեսականը լիակատար վստահու-
թյուն ասացան վաղվա օրվա նկատմամբ և միայն նրանց
գործ դրած աշխատանքի վորակից ու քանակից ե կախ-
ված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մա-
կարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ-ում
աշխատավորի համար անհետացել ե գործազրկության,
աղքատության և սովի պայտեալիքը: Յուրաքանչյուր

բանվոր ու կոլտնտեսական վստահ և ուրախ ե նայում
իր ապագային՝ ավելի ու ավելի բարձր պահանջներ ա-
ռաջադրելով գիտութեանն ու կուլտուրային:

Առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ-ն դարձավ
առաջավոր կուլտուրայի յերկիր: Վերացվել ե տասնյակ
միլիոնավոր բանվորների և գյուղացիների անգրագի-
տությունը և իրականացված ե անցումն ընդհանուր
պարտադիր տարրական ուսուցման: Լայն ծավալվել ե
արտադրողական կրթությունը, խիստ կերպով բարձ-
րացել ե թերթերի, ամսագրերի և մյուս տպագրական
հրատարակությունների տիրածը: Զգալի հաջողու-
թյուններ են ձեռք բերված գիտական-տեխնիկական
մտքի զարգացման բնագավառում, վորն ինքնուրույն
կերպով լուծել ե մի շարք խոշորագույն տեխնիկական
պրոբլեմներ:

Առանձնապես զգալի տնտեսական և կուլտուրական
աճ ե տեղի ունեցել Միութեան ազգային ռայոններում,
վորոնք արագ թափով ընթանում են իրենց հետամնա-
ցության վերջնական լիկվիդացիայի ուղիով:

Հնգամյակի հետևանքով, ամբողջ աշխարհի հա-
րյուր միլիոնավոր աշխատավորների աչքի առաջ, մարդ-
կութեան պատմութեան մեջ առաջին անգամ գործնուկա-
նում ապացուցված ե մի յերկրում սոցիալիզմ կառու-
ցելու հնարավորությունը:

Առաջին հնգամյակի այդ բոլոր հաջողությունները
նախապատրաստեցին յերկրորդ հնգամյակի կառուցման
ու իրագործման նախադրյալն ու հզոր բազան:

«Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքա-
կան խնդիրը հանդիսանում ե կապիտալիստական
տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնա-
կան լիկվիդացիան, դասակարգային տարրերու-
թյուն և շահագործում ծնող պատճառների լիակա-
տար վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների
հաղթահարումն եկոնոմիկայում ու մարդկանց գի-
տակցութեան մեջ, յերկրի վողջ աշխատավոր բնակ-
չութեան վերածումն անդասակարգ սոցիալիստա-

կան հասարակութեան գիտակից և ակտիվ կառուցողները» (XVII կուսկոնֆերենցիա) :

Պորտաբույծ դասակարգերի մնացորդների վերջնական լիկվիդացիան և ամբողջութեամբ աշխատավորութեան տրամադրութեան տակ անցնող ժողովրդական յեկամաթի ընդհանուր աճը յերկրորդ հնգամյակում պետք է ապահովեն՝ բանվորական և կոլտնտեսական մասնաւորների բարեկեցութեան եւ ավելի արագ վերելքը, ռեալ աշխատավարձի զգալի աճը և աշխատավորութեան սպառման մակարդակի բարձրացումը յերկու-յերեք տնոգամ :

Այդ խնդիրների իրագործումը հնարավոր է միայն ժողովրդական վողջ տնտեսութեան, արդյունաբերութեան, տրանսպորտի, գյուղատնտեսութեան ծավալուն տեխնիկական վերակառուցման հիման վրա : Դրա համար եւ յերկրորդ հնգամյակի հիմնական և վճռողական տնտեսական խնդիրը ժողովրդական վողջ տնտեսութեան վերակառուցման ավարտումն է : Իսկ ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցման ավարտման վճռողական պայմանը յերկրորդ հնգամյակում պետք է հանդիսանա նոր տեխնիկայի և նոր արտադրութիւնների յուրացումը : «Նոր շինարարութեան պափար...» պետք է յերկրորդ հնգամյակում լրացվի «նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման պափարով, աշխատանքի արտադրողականութեան լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով» (Ստալին) :

1

Ժող. վրդպան ՏԵՏԵՍՈՒԹԵԱՆ ՏԵՆԵՒԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ
ՅԵՒ ԱՐՏԱԳՐԱՆԻ ԱՅԻ ՆՐԱԳԻՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳՄԱՍԿԱԿԱՆՍ

Համ Կ(բ) XVII համագումարը հաստատում է Միութեան Պետական պլանային հանձնաժողովի ներկայացրած և Համ Կ(բ) Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորւի ընդունած՝ ժողովրդական վողջ տնտեսութեան

տեխնիկական վերակառուցման ավարտման և արտադրանքի աճի ծրագիրը յերկրորդ հնգամյակում :

Համ Կ(բ) համագումարը վորոշում է՝

1. Վողջ արդյունաբերութեան արտադրանքի ծավալը 1937 թվականին, այսինքն՝ յերկրորդ հնգամյակի վերջին՝ սահմանել 92,7 միլիարդ ռուբլի (1926—1927 թվականի գներով)՝ ընդդէմ առաջին հնգամյակի վերջին՝ 1932 թվականի 43 միլիարդ ռուբլու, այսինքն՝ յտարեկան միջին աճում 16,5 տոկոս և արդյունաբերական արտադրանքի չափի ավելացում 2,1 անգամ, իսկ նախապատերազմային մակարդակի համեմատութեամբ՝ մոտավորապէս 8 անգամ : Լայն սպառման առարկաների արտադրութեան ուղղութեամբ նշել զարգացման ավելի արագ տեմպ վող միայն առաջին հնգամյակի համեմատութեամբ (աճի տարեկան միջին տեմպը 18,5 տոկոս՝ առաջին հնգամյակի 17 տոկոսի փոխարեն), այլև յերկրորդ հնգամյակում արտադրութեան միջոցների արտադրութեան զարգացման տեմպի համեմատութեամբ (աճի տարեկան միջին տեմպ 18,5 տոկոսով՝ արտադրութեան միջոցների աճի միջին տարեկան տեմպի 14,5 տոկոսի փոխարեն) :

2. Սահմանել արտադրանքի հետևյալ չափն ըստ արդյունաբերութեան կարեւորագույն ճյուղերի .

	Առաջադրանք 1937 թվականի համար	
	Բացարձակ	Տոկոսներով 1932թ. համեմատութեամբ
Վողջ արդյունաբերութեանը, 1926—27 թվականի գներով (միլիարդ ռուբլիներով)	92,7	214,1
Այդ թվում		
Արտադրութեան միջոցների արտադրութեանը	45,5	107,2
Սպառման առարկաների արտադրութեանը	47,2	233,6
Ծանր արդյունաբերութեան ժողկոմատ (միլիարդ ա.)	33,5	23,6
Նեւառարդյունաբերութեան ժողկոմատ (միլիարդ ա.)	3,6	200,0
Թեթև Արդյունաբերութեան ժողկոմատ (միլիարդ ա.)	19,5	248,8
Մասժողկոմատ (միլիարդ ռուբլիներով)	11,9	266,1

Մեքենային ու թիվային և մեքենային (1926—27 թ. հանրով) մեքենայի ու թիվային . . .			19,5	207,0
Սյու թիվային . . .				
Մեքենային դադարյան (հազար հատով) . . .			40	267,0
Տրակտորներ՝ պայմանական 15 ուժանք (հազար հատով) . . .			167	323,0
Կոմբիններ (հազար հատով) . . .			20	200
Մագիստրալային շոգեբարձր (հազար ժամական ժամ) և «ԿՄ», հատով) . . .			2800	337
Ազդանալիքային վազաններ՝ յերկու ունաններին հաշվով, հազար հատով . . .			118,4	531
Այլաբերականներ (հազար հատով) . . .			200	837,0
Երկրորդային ժամանակահատվածի վերաբերյալ . . .			38	283,0
Սյու թիվային . . .				
Գլխավոր դռնային կայաններ . . .			24,5	296
Գործարար (միլիոն տոններով) . . .			152,5	237
Գործարար հում նյութ (միլիոն տոններով) . . .			46,8	210
Ջուր (միլիոն տոններով) . . .			16	263
Գործարար (միլիոն տոններով) . . .			17	289
Գործարար (միլիոն տոններով) . . .			13	303
Գործարար արդյունաբերություն (1926—27 թ. հանրով, միլիոն ուժանքներով) . . .			5,5	280
Տարածական (միլիոն խոր, մետրերով) . . .			43	176
Բաժանված գործարար, ջրեր (միլիոն մետրերով) . . .			5100	188
Վառելիք (միլիոն մետրերով) . . .			600	461
Կոմբին (միլիոն գործարար) . . .			180	220
Շաքար-շաքարավազ (հազար տոններով) . . .			500	302
Ջրան վառ (հազար տոններով) . . .			1800	139
Մի (Մատուցողական, միլիոն տոններով) . . .			1200	276
Գործարար (միլիոն բանականներով) . . .			1000	279

Նկատի ունենալով, վոր տեղական արդյունաբերությունը կարող է լուրջ լրացուցիչ ֆակտոր հանդիսանալ բանվորների և կոլտնտեսականների արագորեն աճող պահանջները բաղմանող մանրորեն բավարարելու գործում, համապատասխան յերկրորդ հնգամյակում տեղական արդյունաբերության կողմից արտադրվող լայն սպասարկման առարկաների արտադրության համար նախատեսվում է աճում յերեք անգամ և պարտավորեցնում է տեղական մարմիններին՝ առավելագույն նախաձեռնություն հանդես բերել տեղական արդյունաբերության

զարգացման ու հումքի նոր տեսակներ հայտաբերելու գործում : Միաժամանակ համապատասխան պարտավորեցնում է կենտրոնին ու ժողովրդական ուժեղացնել տեղական արդյունաբերությունը՝ միութենական և հանրապետական արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ տեղական մարմինների տնօրինությանը հանձնելու միջոցով, նաև տեղական արդյունաբերության շահույթների զգալի մասը դնելով տեղական գործկոմների արտադրության տակ :

Յ. Համապատասխան մատնանում է, վոր արդյունաբերության զարգացման սահմանված ծրագիրը կատարվելու և ժողովրդական տնտեսության տեխնիկական վերափոխումն իրականացնելու համար անհրաժեշտ է .—

ա) Տեխնիկական վերափոխել խՍՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, վորն ապահովի նորագույն տեխնիկական նվաճումներն ամենակարճ ժամանակամիջոցում արտադրանքը և 1937 թվականին արդյունաբերության վողջ արտադրանքի մոտ 80 տոկոսն առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում կառուցված կամ ամբողջովին վերակառուցված նոր ձեռնարկություններից ստանալը : Միմիայն յերկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսությանը տրվող արտադրության միջոցները պետք է յերկրորդ հնգամյակի վերջում կազմեն ժողովրդական վողջ տնտեսության մեջ գործող արտադրության միջոցների 50—60 տոկոսը :

բ) Կենսադործել մեքենային ու թիվային—ժողովրդական տնտեսության այդ առաջատար ճյուղի— ալիպիսի վերակառուցումը, վորն ապահովի ժողովրդական տնտեսության՝ ժամանակակից, տեխնիկական առաջավոր սարքավորման բոլոր պահանջները սեփական ուժերով բավարարելն՝ արտադրության նոր տեսակների լայն զարգացման պայմաններում : Յերկրորդ հնգամյակում պետք է յուրացվի մոտ 200 տեսակ—չափի նորագույն զարգացման արտադրություններ : Մեքենայագործական մեքենային ու թիվային յուրացնելու մեքենայագործական

Հան բոլոր ցեղերի սարքավորման լրիվ կոմպլեկտը՝
թեթև և սննդի արդյունաբերության տասնյակ նոր տի-
պի մեքենաների մեքենաշինությունը։ Գյուղատնտեսա-
կան մեքենաշինությունը պետք է յուրացնի մեքենաների
ու տրակտորային կցորդ ինվենտարի բոլոր տեսակների
արտադրությունը, վորն անհրաժեշտ է գյուղատնտեսու-
թյան հետագա մեքենայացումն իրականացնելու՝ հատ-
կապես տեխնիկական ու շարքահերկ կուլտուրաների
աշխատանքի պրոցեսները մեքենայացնելու համար։
Պետք է լայնացվի ճանապարհային աշխատանքների, կո-
մունալ տնտեսության ու բնակարանային-կենցաղային
շինարարության սարքավորման արտադրությունը։

գ) Հիմնականում ավարտել արդյունաբերության
բոլոր աշխատանքային և դժվարին պրոցեսների մեքենա-
յացումը։ Քարածխի արտադրության ասպարիզում
հանքահատման աշխատանքների մեքենայացումը հըն-
գամյակի վերջին հասցնել 93 տոկոսի, համապատաս-
խանորեն բարձրացնելով մյուս պրոցեսների մեքենա-
յացման մակարդակը. — սև մետաղագործության մեքե-
նայացումը հասցնել այնպիսի մակարդակի, վորն ա-
պահովի չուգունի 80 տոկոսը լիովին մեքենայացված
դոմեններից ստանալը. տորֆի արդյունաբերության
ասպարիզում մեքենայացված յեղանակներով տորֆի
արդյունահանման չափը սահմանել տորֆի բնդհանուր
արդյունահանման ավելի քան 70 տոկոսի չափով. շինա-
րարության բնագավառում հիմնական պրոցեսների մե-
քենայացումը բարձրացնել մինչև 80 տոկոսի և իրակա-
նացնել տեղական շինանյութերի արդյունահանման մե-
քենայացումը. անտառանյութերի մթերման ու մշակու-
թյան մեքենայացման ասպարիզում՝ փոխադրության
մեքենայացումն ավելացնել 6 անգամ, մշակմանը՝ 3
անգամ. խրագործել փայտածուխի այրման մեքենայա-
ցումը։

դ) Նոր եներգետիկ բազա ստեղծել Ժողովրդական
տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցումն ավար-
տելու համար և բոլոր եներգետիկ հանգույցներում կա-

րողությունն ուղեկներ ստեղծել, վորանք ապահովեն
Ժողովրդական տնտեսության անընդմեջ ելեկտրոմա-
տակարարումը։ Հիմնականում ավարտել արդյունաբե-
րության ելեկտրիֆիկացիան, արդյունաբերության բո-
լոր ճյուղերում, հատկապես մետաղագործության և
քիմիայի բնագավառում, ամենալայն կերպով ոգտա-
գործելով արտադրության ելեկտրոնկալ նորագույն մե-
թոդները (ելեկտրոնկալ արտադրությունների կողմից
եներգիայի սպառման աճում ավելի քան 9 անգամ),
լայնորեն զարգացնելով տրանսպորտի ելեկտրիֆիկա-
ցումը և ելեկտրոններիցիան աստիճանաբար արմատաց-
նելով գյուղատնտեսության արտադրական պրոցեսնե-
րում։ Ավելի լայն կերպով ծավալել արդյու-
նաբերության ու խոշոր քաղաքների ջերմավորու-
մը։ Շարունակել ելեկտրոմատակարարման հա-
մար վառելիքի տեղական տեսակները՝ Մերձ. մոսկո-
վյան ավազանի, Ուրալի, Արևելյան Սիբիրի, Միջին
Ասիայի ածուխը, տորֆը և թերթաքարը, ու հատ-
կապես հիդրոեներգետիկ մեջնաներն ավելի լայն
կերպով ոգտագործելու դիմը։ Յերկրորդ հնգամյակում
ավարտել չրջանային կայանների հանգուցավորումը
չրջանների սահմաններում և սկսել կայանների միջջրա-
նային հանգուցավորումը, արգեն յերկրորդ հնգամյա-
կում ստեղծելով ելեկտրոմատակարարման ամենախո-
շոր սխեման ամբողջ աշխարհում (Դանբառ-Մերձ-
Դենպրյան չրջանը՝ տարեկան 9 միլիարդ կիլովատ Ժամ
արտադրությամբ)։ Ծավալել տորֆի և թերթաքարերի
դադելիֆիկացիան։

ե) Լիովին վերացնել սև մետաղագործության հեռ-
մնալը Ժողովրդական տնտեսության զարգացման բնդ-
հանուր տեմպերից։ Հնգամյակի տարիներին կրկա-
պատկել մետաղագործության կարողությունը, միջոց-
ներ ձեռք առնել արագորեն հաղթահարելու այն խոշու-
մը, վոր գոյություն ունի դոմենային և նրանցից հեռ-
մնացող պողպատածուլման և հատկապես պրոկատային
ընկերի կարողության միջև. — մետաղի զանազան տե-

սակներին՝ վերականգնող մեծագույն, երկարապողպատի, ֆերրո-համաձուլվածքներէ, բարդ պրոֆիլ ունեցող պրոկատի արտադրութեանը ծախսել ժողովրդական տնտեսութեան պահանջները լիովին բավարարող չափով: Եւ այն վերականգնման յենթարկել յերկարամասնափայլի արդյունաբերութեանը, լայնորեն արմատացնելով հանքաքարի հարստացման ու ազլոմբեցիայի մեթոդները:

Առանձնապէս արագ տեմպ հաղորդել գումարը մետաղագործութեան զարգացմանն ու տեխնիկական վերազինմանը, վերջնականապէս անցնել պղինձ ստանալու ժամանակակից յեղանակներին (Ֆլուտացիա, արտացոլիչ վառարաններ) և ցինկի արտադրութեան մեջ լայնորեն արմատացնել առաջավոր երկարաձուլական մեթոդը և նրա ոգնութեամբ 1937 թ. ստանալ վողջ ցինկի 70 տոկոսը: Կազմակերպել անագի, նիկելի, մագնեզիոնի արտադրութեանը, լայն ծախսել ալյումինի արտադրութեանը: Լրիվ բավարարել ամբողջ ժողովրդական տնտեսութեան, մանավանդ երկարաձուլական մեթոդները գունավոր մետաղագործութեան արտադրանքով:

դ) Վճռական տեղաշարժեր առաջացնել քիմիական արդյունաբերութեան զարգացման մեջ, վերն ապահովի ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի լայն քիմիացումը և յերկրի պաշտպանունակութեան ամրացումը: Յերկրորդ հնգամյակի ընթացքում տասնապատիկ ավելացնել ամեն տեսակի պարարտանյութերի արտադրութեանը: Լայնորեն ծախսել քիմիական միջոցներ արտադրութեաններ ստեղծելու պրոցեսը (կարծր վառելանյութի— ածխի, տորֆի, թերթաքարերի քիմիական վերամշակման, ներկանյութերի նոր տեսակներ, պլաստմասսաներ, սինթետիկ կաուչուկ և այլն): Եւ նորոգիական նորագույն պրոցեսներն արմատացնել քիմիական արդյունաբերութեան մեջ (լայն զարգացնել երկարաձուլական մեթոդները, ռետինեղաններ կատարել դազային ֆապերում և այլն):

ուժեղացնել քիմիական արդյունաբերութեան կոմբինացումն արդյունաբերութեան մյուս ճյուղերի հետ (կոքսային արդյունաբերութեան, գունավոր մետաղագործութեան, սև մետաղագործութեան հետ և այլն) և համաժամեցնել շարք նոր տեսակներին ոգնագործումը:

է) Ըստ ամենայնի ծախսել քեք-և ու սննդի արդյունաբերութեան կարեւորագույն ճյուղերի արտադրութեանը՝ խոշոր մեքենայական ինդուստրիայի ստեղծման հիման վրա:— գործվածքային ավտոմատիկ դադգյահների տեսակարար կշիռը բամբակեղենի արդյունաբերութեան մեջ մինչև 40 տոկոս հասցնելը հնգամյակի վերջում և հետամնաց մանվածքային մեքենաները ժամանակակից մեքենաներով փոխարինելը: վերացնել վուչի արդյունաբերութեան տեխնիկական հետամնացութեանը՝ արագաշարժ մեքենաներ արմատացնելու և վուչի նախնական մշակումն արմատապէս վերակառուցելու միջոցով: իրագործել տրիկոտաժի, կարի և կոշիկի արտադրութեանների բազմակողմանի մեքենայացումը: Կոմբինացման զարգացման հիման վրա ստեղծել խոշոր, մեքենայական մարդկային արդյունաբերութեան, ձկան մեքենայացված վորսի տեսակարար կշիռը բարձրացնել մինչև պետական ձկնարդյունաբերութեան վորսի 70 տոկոսին՝ տեխնիկական նավատորմի զգալի վերակառուցման միջոցով: Եւ այն վերակառուցման յենթարկել ձիթհան արդյունաբերութեանը՝ արտադրութեան ամենից ավելի եփեկտավոր եքստրակցիոն յեղանակի արմատացման հիման վրա:

4. Արդյունաբերութեան տեխնիկական վերակառուցման ինդիքների իրագործումը պահանջում է հաշուութեամբ յուրացնել նոր տեխնիկան և նոր արտադրութեանները, վորը պետք է իր արտահայտութեանը գտնի աշխատանքի արտադրողականութեան զգալի աճի և ինքնարժեքի լուրջ կրճատման մեջ: Դրան համապատասխան համազումարը սահմանում է՝

ա) արդյունաբերութեան տապարիզում աշխատանքի արտադրողականութեանը յերկրորդ հնգամյակում

բարձրացնել 63 տոկոսով՝ սուաշին հնգամյակի 41 տոկոսի փոխարեն, այսինքն՝ այնպիսի չափերով, յերբ աշխատանքի արտադրողականությունը վճարական գործոն է դառնում յերկրորդ հնգամյակում արտադրանքն ավելացնելու համար տրվալոված ծրագրի կատարման մեջ:

բ) ամբողջ արդյունաբերության մեջ ինքնարժեքն իջեցնել 26 տոկոսով և այդ միջոցով ապահովել առնու-վադն 13 միլիարդ ռուբլու կուտակումը 1937 թվականին ի հաշիվ ինքնարժեքի իջեցման ուրվագծված չափի՝ համեմատած ինքնարժեքի 1932 թ. մակարդակի հետ:

գ) ինքնարժեքի իջեցման հետ միաժամանակ կլու-րականապես բարելավել արտադրանքի վորակն ու ա-ստիքիմենտը ժողովրդական տնտեսության բոլոր ճյու-ղերում: Միջոցներ ձեռք առնել զգալիորեն նվազեցնե-լու մոխրի և ծծմբի պարունակությունն ածխի մեջ, բարձրացնել մետաղագործության մեջ տեսակավորու-թյունը, բարելավել մեքենաների վորակը և նրանց ոգ-տակար գործողության գործակիցը, բարձրացնել ման-վածքի համարավորությունը, կտրականապես բարելա-վել բամբակեղեն և վլյա գործվածքների վորակը, բարձրացնել բրդեղենի արդյունաբերության նուրբ մա-հուդյա և կամվոյային խմբերի տեսակարար կշիռը, բարձրացնել նուրբ բրդի տեսակարար կշիռը գործվածք-ներում, կտրուկ կերպով բարձրացնել ռճառի վորակը՝ ի հաշիվ ավելի մեծ քանակությամբ ճարպային հիմքի գործածության, բարելավել կոշիկեղենի վորակը՝ ինչ-պես ի հաշիվ կարի յեղանակների, նույնպես և ի հաշիվ գործածվող հումքի. բարելավել մսարդյունաբերու-թյան արտադրանքի վորակը՝ ի հաշիվ խոզի մսի, յեր-չիկների և ուտելու ճարպի տեսակարար կշիռի բարձրաց-ման. բարելավել ձկնարդյունաբերության արտադրանքի վորակը՝ ձկան լավ տեսակների տեսակարար կշիռի ավե-լացման միջոցով. զգալի չափով բարելավել ալյուրա-ցային արդյունաբերության ասորտիմենտն ու արտա-

դրանքը՝ ազունի բարձր տեսակների տեսակարար կշիռի ավելացման հաշվին:

5. XVII համագումարն ամբողջ գյուղատնտեսու-թյան արտադրանքի աճը հնգամյակի տարիներին սահ-մանում է 13,1 միլիարդ ռուբլուց (1926—27 թվականի գներով) մինչև 26,2 միլիարդ ռուբլի, այսինքն՝ կրկնա-կի:

Համագումարը պարտավորեցնում է գյուղատնտե-սության կարևորագույն ճյուղերում արտադրանքը հասցնել հետևյալ չափերի. — հացահատիկային կուլտու-րաներ՝ 1.048 միլ. ցենտներ, բարձրացնելով մի հեկ-տարի բերքատվությունը 10 ցենտների. չաքարի ճակըն-դեղ՝ 276 միլ. ցենտներ, բարձրացնելով մի հեկտարի բերքատվությունը մինչև 200 ցենտների. բամբակ-բու-սածեղ՝ 7 միլիոն ցենտներ, բարձրացնելով ջրովի բամ-բակի բերքատվությունը մի հեկտարից 12 ցենտների. վուշ-բուսածեղ՝ 8 միլիոն ցենտներ, բերքատվությունը բարձրացնելով մինչև 3,7 ցենտների, իսկ անասնաբու-ծության արտադրանքը բարձրացնել յերկու ու մի քա-ռորդ անգամ:

6. Համագումարն ընդգծում է, վոր գյուղատնտե-սության արտադրանքի ուրվագծված աճը կարող է ձեռք բերվել միայն կոլեկտիվացման լիակատար ավարտման և վողջ գյուղատնտեսության տեխնիկական վերակա-ռուցման իրադրոժման հիման վրա, վորի համար անհրաժեշտ է. —

ա) հացահատիկային, անասնապահական, ճակընդե-ղի մշակության, բամբակագործական և այլ խորհուրդ-տնտեսությունները դարձնել գյուղատնտեսական որինա-կելի ձեռնարկություններ՝ մեքենայական խոշոր ուրն-տնտեսության տեխնիկայի յուրացման ուղղությամբ կա-տարվող համառ աշխատանքի, ճիշտ ցանքաչրջանառու-թյունը լիովին կիրառելու և սերմացվի գործը կազմա-կերպելու, անասունների ցեղը բարելավելու, արտա-դրանքի վորակը բարձրացնելու և պետությանը հանձն-վող հացահատիկի, ճակընդեղի, բամբակի, մսի, կա-

թի, յուղի, կաշու ու բրդի քանակն ավելացնելու և արտադրութեան վաղը կազմակերպումը վճարողներին բարելավելու, մեծածախի խորհրդատեսութեանները մանրացնելու, չափից դուրս մասնագիտացումը վերացնելու և այլնի հիման վրա.

բ) ՄՅկայանների թիվը 1932 թ. 2.446-ից հասցնել մինչև 6000-ի 1937 թվականին, ընդգրկելով մեքենա-սարակաւորային կայաններով բոլոր կոլտնտեսութեանները.

գ) տրակտորային պարկը 1932 թ. 2.225 հազար ձիու ուժից ավելացնել մինչև 8.200 հազար ձիու ուժի 1937 թվականին, այսինքն՝ 3,7 անգամ. կոմբայնների պարկը մինչ 100 հազար հատ և ավտոմոբիլային պարկը գյուղատնտեսութեան մեջ՝ մինչև 170 հազար մեքենա, այսինքն՝ ավելի քան 12 անգամ.

դ) հիմնականում ավարտել գյուղատնտեսութեան մեքենայացումը. — 1937 թվականին տրակտորով կապարված վարը և աշնան հերկը պետք է կազմեն 80 տոկոս, կուլտիվացիան՝ 70 տոկոս, տրակտորային բերքահավաք մեքենաներով հացահատիկների հավաքումը՝ 60 տոկոս և կալսելու մեքենայացումը՝ 85 տոկոս.

ե) լայնորեն արժատացնել ագրոտեխնիկ ձեռնարկումների սիստեմը, ամենուրեք մտցնել ճիշտ ցանքաշրջանառութեան, հացարույների ցանքսի տարածութեան 75 տոկոսի վրա ցանքսը կատարել ընտիր սերմացվով, ցանքսի տարածութեան 50 տոկոսն ընդգրկել աշնանավարով.

զ) բամբակի ցանքների ապահովվածութեանն ազատային պարարտանյութերով յերկրորդ հնգամյակի ընթացքում ցանքների տարածութեան 6 տոկոսից հասցնել մինչև 80 տոկոսի, ճակնդեղինը՝ ազատային պարարտանյութերով 6 տոկոսից մինչև 40 տոկոս, իսկ ֆոսֆորով՝ 9 տոկոսի փոխարեն՝ ամբողջ տարածութեանը և լայն ծափալի խոիդոցին աշխատանքները, վոլոգելի հողերն ընդարձակելով մեկ միլիոն հեկտարով:

7. Համագումարը սահմանում է տրանսպորտի հիմ-

նական տեսակների համար բեռնաշրջանառութեան հետեւյալ աճը. — յերկաթուղայինը՝ 1932 թ. 169 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 300 միլիարդ տոնն-կիլոմետր 1937 թվականին, գետային տրանսպորտինը՝ 26 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 63 միլիարդ տոնն-կիլոմետր, ծովայինը՝ 18 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 51 միլիարդ տոնն-կիլոմետր և ավտո-տրանսպորտինը՝ մեկ միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 16 միլիարդ տոնն-կիլոմետր:

Բեռների փոխադրման աշխատանքը տրանսպորտի զանազան տեսակների միջև ավելի ռացիոնալ կերպով բաշխելու նպատակով համագումարը մասնաւորում է, վոր անհրաժեշտ է յերկրում բեռների փոխադրման աշխատանքում բարձրացնել տրանսպորտի նոր տեսակները՝ ավտո- և ավիո-տրանսպորտի, ինչպես նաև ջրային տրանսպորտի տեսակաբար կշիռը, հիմնական դերը թողնելով յերկաթուղային տրանսպորտին:

8. Համագումարն ընդգծում է տրանսպորտի և կապի տեխնիկական վերակառուցման անհրաժեշտութեանը, վորը պետք է կատարվի հետեւյալ հիմնական ուղղութեաններով. —

ա) կարևորագույն յերկաթուղային գծերի վերակառուցման իրադրոժումը. — 5 հազար կիլոմետր յերկաթուղային գծի ելեկտրիֆիկացիա, ամենից ավելի ծանրաբեռնված հիմնական մագիստրալներին զուգընթաց մոտ 9.500 կիլոմետր կրկնակի գծերի անցկացում (Ուրալ-Կուզբասյան, Անդրբայկալյան, Ուսսուրիական յերկաթուղիները, Դոնբասի յերկաթուղիները և այլն). յերկաթուղային հանգույցներում և կայարաններում կայարանային գծերի յերկարութեան ավելացումը 8.500 կիլոմետրով, թեթև տեսակի ռելսերը ծանրերով փոխարինելը մինչև 20.000 կիլոմետր յերկարութեան վրա. կամուրջների լայն շինտարաութեան. 8.300 կիլոմետր ցանցը սարքավորել ինքնակապով, ուժեղացնել դորձող ուղիները (անցնել խճային բալաստի, ավելացնել յուրաքանչյուր կիլոմետրի ռելսակալների թիվը և այլն):

բ) Լոկոմոտիվների պարկը 1932 թվի 19,5 հազար հատից հասցնել 24,6 հազար հատի 1937 թվականին, միաժամանակ անցնելով լոկոմոտիվների ավելի գորեղ և կատարելագործված տեսակներին, «ՓԼ» հզոր շոգեքարչը պետք է դառնա յերկրորդ հնգամյակում սալրանաքատար շոգեքարչային պարկի հիմնական միավորը, իսկ «ՈՇ» հզոր շոգեքարչը—մարդատար շոգեքարչային պարկի հիմնական միավորը. ավելի լայն կիրառումն պետք է դառնն ջերմաքարչերը և ելեկտրաքարչերը:

գ) Վազոնային պարկի աճը 1932 թ. 552 հազար հատից հասցնել մինչև 800 հազար հատի 1937 թվականին (յերկսունանու հաշվով), զգալիորեն ավելացնելով մեծատեղ վառոնների տեսակարար կշիռը, լրիվ սարքավորելով վազոնների ամբողջ պարկն ինքնարդեյակներով և վառոնների պարկի առնվազն կես մասն ինքնապահովումով:

դ) Իրականացնել նոր խոշորագույն յերկաթուղագծերի՝ Բայկալ—Ամուրի մագիստրալը, Ակմոլինսկ—Կարաուլի, Մոսկվա—Դոնբասի, Կարադանդա—Բալխաշի, Ուֆա—Մադնիսնայայի և այլոց շինարարությունը, վորով յերկաթուղիների ցանցի ընդհանուր յերկարությունը 1933 թ. հունվարի 1—ի 83 հազար կիլոմետրից 1938 թվի հունվարի մեկին հասնելու յե 94 հազար կիլոմետրի:

ե) Զրային տրանսպորտի ասպարիզում պետք է իրագործվի արհեստական ջրային ուղիների— ջրանցքների հսկայական շինարարությունը.— Սպիտակծովյան— բալթիական ջրանցքը 227 կիլոմետր յերկարությամբ (առաջին հերթն ամարտված է յերկրորդ հնգամյակի առաջին տարում), Մոսկվա—Վոլգա ջրանցքը 127 կիլոմետր յերկարությամբ, Վոլգա—Դոն ջրանցքը՝ 100 կիլոմետր յերկարությամբ, Մարինսկի և Մոսկվա գետի ջրային սխտեմների վերակառուցումը, վորը գործող ջրային ուղիների վրա հիդրոտեխնիկական աշխատանքների մեծ ծավալի հետ միասին (անընդմեջ ուղի Գնեպրի վրայով, Սոժ գետի չյուզավորում, Միջին Վոլ-

գայի վերակառուցումը) հիմնականում կապահովի ջրային ուղիների վերակառուցումը և ԽՍՀՄ յեվրոպական մասի միասնական ջրային սխտեմի ստեղծումը, վորը միացնելու յե Սպիտակ, Բալթիկ, Սև և Կասպից ծովերը: Նավարկելի ուղիների յերկարությունը յերկրորդ հնգամյակում պետք է 84 հազար կիլոմետրից հասնի 101 հազար կիլոմետրի, զգալի չափով բարելավելով նրանց նավարկելիության պայմանները: Արմատապես պետք է վերանորոգվի և վերակառուցվի ծովային և գետային նավատորմը, նմանապես պետք է զարգացվի ծանծաղագնաց նավերի շինարարությունը՝ փոքր գետերն ողտապործելու համար:

զ) Ավտո—նաւապարեային տրանսպորտի գծով ավտոմոբիլների պարկը 1933 թվի հունվարի մեկի 75 հազար մեքենայից 1938 թվի հունվարի մեկին պետք է հասնի 580 հազար մեքենայի, կամ ավելանա համարյա 8 անգամ. պետք է լայն չափով ծավալվի հողածածկ ճանապարհների և խճուղիների ցանցի շինարարությունը, հիմնականում վերացվի ճանապարհազրկությունը և յերկրի ընդհանուր ճանապարհային ցանցն ավելացնելով 210 հազար կիլոմետրով, չհաշված տեղական միջոցներով կատարվելիք զգալի շինարարությունը:

է) Քաղաքացիական ողանավատորմի ասպարիզում միութեական նշանակություն ունեցող ողային հաղորդակցության գծերը յերկրորդ հնգամյակում 32 հազար կիլոմետրից հասնելու յե 85 հազար կիլոմետրի, այսինքն՝ ընդարձակվելու յե համարյա յերեք անգամ: Դրա հետ միասին պետք է լայն ծավալվի տեղական ողային գծերի լայն շինարարությունը և 1937 թվ. շահագործվող գծերի յերկարությունը հասցվի 35 հազար կիլոմետրի:

ը) Վճռական տեղաշարժեր են կատարվելու քեռնաքարձման և քեռնաքափման աշխատանքի մեքենայացման ընդամառում.— մեքենայացումը յերկաթուղային տրանսպորտում ավելանալու յե յերեք ան-

գամ (18 տոկոսից հասնելու յե 57 տոկոսի), ծովայինում՝ 14 տոկոսից հասնելու յե 72 տոկոսի, գետային տրանսպորտում՝ 12 տոկոսից 56 տոկոսի, այսինքն՝ ավելանալու յե մոտ 5 անգամ:

թ) Համագումարն ընդգծում է կապի բոլոր տեսակներին, մանավանդ ռադիոյի մեծ դարձացման և կապի աշխատանքի վորակի արմատական բարելավման անհրաժեշտությունը:

9. Համաձայն տրանսպորտի նյութական-տեխնիկական բազայի զգալի բարձրացման և աշխատանքի արտադրողականության աճման հսկայական հնարավորությունների ստեղծման, համագումարը սահմանում է, վոր յերկրորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականությունը յերկաթուղային տրանսպորտում աճելու յե 43 տոկոսով, ջրային տրանսպորտում՝ 36 տոկոսով, միևնույն ժամանակ ամբողջ տրանսպորտում ինքնարժեքն իջնելու յե 40 տոկոսով, նույն թվում յերկաթուղային տրանսպորտում՝ 10,5 տոկոսով, ջրային տրանսպորտում՝ 36 տոկոսով և ավտոտրանսպորտում՝ 54 տոկոսով:

10. Տեխնիկական վերակառուցումն իրականացնելու, տեխնիկական յուրացնելու, աշխատանքի արտադրողականության առաջադրանքները կատարելու վճարական պայմանը վորակյալ բանվորներ, տեխնիկներ ու ինժեներներ պատրաստելն է, սեփական պրոլետարական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու պրոբլեմի լուծումը: Դրա համաձայն համագումարը սահմանում է յերկրորդ հնգամյակում կադրեր պատրաստելու հետևյալ ծրագիրը.

ա) Պատրաստել հինգ միլիոն մասնագիտական վորահավորում ունեցող աշխատող, վորից 2,5 միլիոն հողի ֆաբրիկործուսներում, ավելի քան 1,5 միլիոն հողի գյուղատնտեսության ստացիոնար գյուղացիներում և դասընթացներում (արականորիստներ, բրիգադիրներ և այլն), և 700 հազար հողի շփերների գյուղացիներում և դասընթացներում:

բ) Յերկրորդ հնգամյակում տալ բուհերն ավարտած 340 հազար մասնագետ՝ առաջին հնգամյակի 170,7 հազարի փոխարեն, կամ յերկու անգամ ավելի, և տեխնիկումներն ավարտած 850 հազար մասնագետ՝ առաջին հնգամյակի 308 հազարի փոխարեն, կամ յերեք անգամ ավելի:

գ) Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վորակյալ մասնագետների թիվը 2,7 միլիոնից հասցնել 4 միլիոն հողու, կամ ավելացնել 46,5 տոկոսով, վորից արդյունաբերության մասնագետների թիվն ավելացնել 57 տոկոսով, տրանսպորտի և կապի՝ 60 տոկոսով և գյուղատնտեսության մեջ՝ կրկնապատիկը:

11. Համագումարը մատնանշում է ղիտական-տեխնիկական ինտելիտներին և առանձնապես գործարանային լաբորատորիաների աշխատանքի ամենալայն ծավալման անհրաժեշտությունը: Գիտական-տեխնիկական և գյուտարար միտքը պետք է հզոր գենք դառնա նոր տեխնիկան արմատացնելու, արտադրության նոր տեսակները, հումքի և եներգիայի ոգտագործման նոր մեթոդները կազմակերպելու գործում:

II

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՆՈՐ ԾԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը և արդյունաբերության, գյուղատնտեսության ու տրանսպորտի արտադրական առաջադրանքների նախազգված ծավալը պահանջում են յերկրորդ հնգամյակում իրագործել շինարարական վիթխարի ծրագիր:

Համ կ(բ) XVII համագումարը հավանություն է ապրի Պետական պլանային հանձնաժողովի մշակած յերկրորդ հնգամյակի շինարարության ծրագրին և հաստատում է յերկրորդ հնգամյակում Ժողովրդական տնտեսության գծով կատարվելիք կապիտալ աշխատանքների ընդհանուր ծավալը 133,4 միլիարդ ռուբլու

Հափով (1933 թվի դեբրով)՝ առաջին հնգամյակի 50,5 միլիարդ ուրբլու փոխարեն:

Դրանից. —

ա) Արդյունաբերության ասպարիզում 69,5 միլիարդ ուրբլի՝ առաջին հնգամյակի 25 միլիարդ ուրբլու փոխարեն, վորից արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության բնագավառում 53,4 միլիարդ ուրբլի՝ 21,3 միլիարդ ուրբլու փոխարեն, կամ աճում 2,5 անգամ. սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության ասպարիզում՝ 16,1 միլիարդ ուրբլի՝ 3,5 միլիարդ ուրբլու փոխարեն, կամ աճում 4,6 անգամ:

բ) Դյուղատնտեսության ասպարիզում՝ 15,2 միլիարդ ուրբլի, առաջին հնգամյակի 9,7 միլիարդ ուրբլու փոխարեն, կամ աճումն ավելի քան մեկ ու կես անգամ:

գ) Տրանսպորտում՝ 26,3 միլիարդ ուրբլի՝ առաջին հնգամյակի 8,9 միլիարդ ուրբլու փոխարեն, կամ աճում 3 անգամ:

Համագումարը մատնանշում է, վոր թեթե և սննդի արդյունաբերության և տրանսպորտի դժով կատարվելիք կապիտալ շինարարության նշված մեծ աճումը համեմատած ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետ, ապահովում է նրանց զարգացման ավելի արագ տեմպը:

13. Համագումարը սահմանում է, վոր յերկրորդ հնգամյակում պետք է շահագործման հանձնվեն նոր և վերահատուցված ձեռնարկություններ 132 միլիարդ ուրբլի ընդհանուր արժողությամբ, առաջին հնգամյակի 38,6 միլիարդ ուրբլու փոխարեն, այդ թվում՝ արդյունաբերության մեջ 69,1 մլրդ. ու՝ առաջին հնգամյակի 15,7 միլիարդ ուրբլու փոխարեն, դյուղատնտեսության մեջ 15,4 միլիարդ ուրբլու՝ 9,2 միլիարդ ուրբլու փոխարեն, և տրանսպորտում՝ 25,6 միլիարդ ուրբլի՝ 7,7 միլիարդ ուրբլու փոխարեն:

14. Կապիտալ աշխատանքների սահմանված ծառ

վալը և նոր ու վերահատուցված ձեռնարկությունները շահագործման հանձնելու ծրագիրն ապահովում է նորհրդային Միության արտադրական-տեխնիկական եզոքության վիթխարի աճումը և ժողովրդական տնտեսության կարեորագույն ճյուղերում կարողության անհրաժեշտ ռեզերվների ստեղծումը, այն է. —

ա) Հնգամյակի ընթացքում հիմնական ֆոնդերի ընդհանուր դումարը 85 միլիարդ ուրբլուց հասնելու յե 195 միլիարդ ուրբլու (1933 թ. դեբրով), վորը նշանակում է հիմնական ֆոնդերի ավելացում 2,3 անգամ, այդ թվում արդյունաբերության ֆոնդերը 25,5 միլիարդ ուրբլուց հասնելու յեն մինչև 77,0 միլիարդ ուրբլի, դյուղատնտեսության դժով՝ 11,4 միլիարդ ուրբլուց մինչև 22,6 միլիարդ ուրբլի և տրանսպորտի դժով՝ 19,8 միլիարդ ուրբլուց մինչև 38,5 միլիարդ ուրբլի:

բ) Արդյունաբերության կարեորագույն ճյուղերի արտադրական կարողությունները պետք է ավելանան հետևյալ չափով. — սև մետաղագործությունը (թուջ)՝ 2,3 անգամ, ածխարդյունաբերությանը՝ ավելի քան յերկու անգամ, գեներատորների արտադրությանը՝ 2,4 անգամ, ավտոմոբիլային արդյունաբերությանը՝ համարյա չորս անգամ, շոգեքարշաչինական գործարաններինը՝ 3,2 անգամ, վագոնաչինական գործարաններինը՝ 3,9 անգամ, չրջանային ելեկտրոկայաններինը՝ 2,5 անգամ, կոչկի արդյունաբերությանը՝ 2 անգամ, բամբակեղենի արդյունաբերությանը՝ մեկ ու կես անգամ, վուչի արդյունաբերությանը՝ ավելի քան յերկու անգամ, չաքարի արդյունաբերությանը՝ 1,5 անգամ, մսի խոշոր կոմբինատներինը՝ 2,5 անգամ:

15. Համագումարն անհրաժեշտ է գտնում առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացնել հետևյալ կարեորագույն կառուցումների վրա. —

Մեքենաշինության ասպարիզում — ավարտել առաջին հնգամյակում սկսված շինարարությունները — Ուրալի ծանր մեքենաշինության գործարանը 100 հա-

դար տոնն կարողությամբ և Կրամատորի գործարանը՝ 150 հազար տոնն արտադրականությամբ, Ուրալի ջեմիական ասպարառների գործարանը, Լուգանսկի չոգեքարչերի գործարանը, տարեկան 1080 « ՓՎ » չոգեքարչ կարողությամբ, Որսկի չոգեքարչերի և ջերմաքարչերի գործարանը, վորը տարեկան արտադրելու յե 500 չոգեքարչ և 500 ջերմաքարչ, Կաշիրի ելեկտրաքարչերի գործարանը, վորը տարեկան տալու յե 300 մագնիստրալային ելեկտրաքարչեր, Ուրալի վազոնաշինական գործարանը՝ տարեկան 54 հազար չորստոնանի վազոնի արտադրությամբ, Կուզնեցկի և Իրկուտսկի վազոնաշինական գործարանները՝ յուրաքանչյուրը 10 հազար չորստոնանի վազոնի արտադրականությամբ, Ուֆայի մոտորային գործարանը՝ 50 հազար մոտորի արտադրությամբ, Խարկովի տուրբո-գեներատորային գործարանը՝ 1,5 միլիոն կիլովատ կարողությամբ, ընդարձակել Գորկու ավտոգործարանը մինչև 300 հազար մեքենա, Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանը՝ մինչև 80 հազար մեքենա, Շարոսլավլինը՝ մինչև 25 հազար 5 տոննանոց բեռնատար մեքենա և մյուսները: Յերկրորդ հնգամյակում կառուցել Ուֆայի և Ստալինգրադի ավտոգործարանները, վորոնցից յուրաքանչյուրը պետք է արտադրի 100 հազար հատ յերեք տոննանոց բեռնատար, Սամարայինը՝ 25 հազար հատ հինգ տոննանոց բեռնատար, հզկոդ, շառավղա-դայլիկոնոդ, ատամնանիվներ պատրաստող, ավտոմատիկ և ծանր գողգյահների գործարաններ, զնդակավոր սոնակալների նոր մեծ գործարան՝ 24 միլիոն հատ սոնակալի արտադրականությամբ, կառուցել Ուրալի ելեկտրական ասպարառների ու տրանսֆորմատորների գործարանը, տեքստիլ մեքենաշինության և սննդադրյունարարության սարքավորումների մի խումբ գործարաններ և այլն:

Ելեկտրիֆիկացիայի ասպարիզում կառուցել 79 չրջանային ելեկտրոկայան, մորոնց թվում ավարակ Զույնովոյի ելեկտրոկայանը 250 հազար կիլովատ կա-

րողությամբ, Գորկու Ղայանը՝ 204 հազար կիլովատ, Շատուրի՝ 180 հազար կիլովատ, Դուբրովկի՝ 100 հազար կիլովատ, Սվիբի № 3 հիդրոկայանը՝ 96 հազար կիլովատ, Դնեպրոգեսի ավարաումը մինչև 558 հազար կիլովատ կարողության, կառուցել մի շարք նոր խոշոր էլենտրոնական ելեկտրոկայաններ.— Մտալինոգորսկի՝ 400 հազար կիլովատ, Կեմերովսկի՝ 148 հազար կիլովատ, նոր հզոր հիդրոկայաններ Դոնբասում. Զիրչեկի № 1 հիդրոկայանը՝ 170 հազար կիլովատ, Քանաքեսի՝ 88 հազար, Խրամ գետի վրայինը՝ 60 հազար, Սվիբի № 2՝ 144 հազար, Տուլոմի և այլն: Միջին Վոլգայինի (Средневольтстрой) կայանների շինարարության ծավալումը.— Ֆարոսլավսկի՝ 100 հազար կիլովատ, Պերմսկի՝ 310 հազար կիլովատ և Գորկովսկի՝ 200 հազար կիլովատ, քաղաքների ջեռուցման համար կառուցել մի շարք խոշոր ջերմակենտրոններ.— Մոսկվա— Նարվայինը և Ուստենսկուն՝ Լենինգրադում, Մտալինյան և Շրունդեյանը՝ Մոսկվայում, Սորմոլո-Կանավինյանը, Կրասնոդավոդյանը՝ Խարկովում և այլն, մի շարք խոշորագույն ռայոնական նշանակություն ունեցող ֆար-գործարանային կայաններ.— Մազնիտոգորսկին՝ 198 հազար կիլովատ, Կուզնեցկին՝ 108 հազար կիլովատ և այլն:

Քարածխային արդյունաբերության մեջ ծավալել խոշոր շախտային շինարարություն, շահագործման հանձնելով 178 շախտ, 143 միլիոն տոնն ածխի հանույթի կարողությամբ:

Նավթի արդյունաբերության ասպարիզում կառուցել նավթամշակման գործարանների մի նոր խումբ (նավթի նախնական թորման 46 խողովակաձև սարք և 93 կրեկինգ), նավթի և նավթամթերքի խողովակների շինարարություն՝ ավելի քան 4 հազար կիլոմետր ընդհանուր յերկարությամբ:

Ծախալել տորֆի և քերքաֆարի արդյունաբերության շինարարությունը:

Սև մետաղագործության ասպարիզում— ավարտել

Մաղնիտոպոսիի գործարանի շինարարությունը 2,7 միլիոն տոնն թուղի կարողությամբ, Կուզնեցկի, Զապորոժյեյի, Նիժնիտագիլի, Ազովստալի, Կրիվորոժյեյի, Լիպեցկու, Տուլայի գործարանները և այլն, ծավալել Բախալսկի, Խալիլովսկի, 2-րդ Կուզնեցկու, Հեռավոր Արևելքի գործարանների, ինչպես և խողովա-կաձուլական գործարանների շինարարությունը և գործարկել նրանց առաջին ագրեգատները:

Գումալդոր մետաղագործության ասպարիզում ավարտել Մերձբալթյան պղնձի կոմբինատը՝ 100 հազար տոնն, Միլին Ուրալինը՝ 50 հազար տոնն, ավարտել Ղաղախտանի 60 հազար տոնն արձնի արտադրակա-նությամբ բազմամետաղ կոմբինատի շինարարությու-նը, ցինկի գործարանները՝ Չելյաբինսկ և Ուլանովսկի-ձե քաղաքներում, Ալտայի բազմամետաղ գործարանը, Կեմերովսկի գործարանը և այլն: Ավարտել Վոլխովի և Դնեպրի ալյումինի գործարանների շինարարությունը, ալյումինի նոր գործարան կառուցել Ուրալում՝ 25 հա-զար տոնն և Կարելիայում՝ 8 հազար տոնն արտադրա-կանությամբ: կառուցել մագնիտի, նիկելի և գունա-վոր մետաղագործության այլ ձեռնարկություններ:

Քիմիայի ասպարիզում կառուցել պարարտանյու-թերի նոր կոմբինատներ ու գործարաններ, սինթետիկ կաուչուկի գործարան, սոդայի, ծծմբաթթվի, ռետի-նի, պլաստիկ զանգվածների, անիլինի և լաքի ներ-կանյութերի ու արհեստական թելի գործարաններ և այլն:

Թեքև արդյունաբերության ասպարիզում կառու-ցել բամբակեղենի 15 նոր խոշոր գործարան, վորոնց թվում Տաշքենդի, Բարնաուլի, Խոջենթի, Չարջույի, Անդրկովկասի բամբակեղեն գործվածքների կոմբի-նատները՝ յուրաքանչյուրը 200 հազար իլիկի կարողու-թյամբ: կառուցել բրդեղեն գործվածքների 12 խոշոր գործարան, վորոնցից յուրաքանչյուրն 8-ից մինչև 15 միլիոն մետր կտորեղենի կարողությամբ, 12 վուլեդե-նի ձեռնարկություն, վորոնցից յուրաքանչյուրը 18—27

հազար իլիկ կարողությամբ, տրիկոտաժի արդյունա-բերության 18 խոշոր ձեռնարկություն, մետաքսեղենի 11 գործարան, կոշիկեղենի 21 գործարան՝ 100 միլիոն զույգ վոտնամանի կարողությամբ:

Սննդի արդյունաբերության ասպարիզում ավար-տել առաջին հնգամյակում սկսված 17 մսի կոմբինատի կառուցումը, ծավալել 23 նոր կոմբինատի շինարարու-թյունը, կառուցել մեծ քանակությամբ շաքարի գոր-ծարաններ, ոճառի 6 գործարան, մեծապես սովեղացնել ձկնարդյունաբերության նավատորմը, կառուցել պա-հածոների և ձկնի գործարաններ, հրուշակարաններ և այլն:

Անտառարդյունաբերության մեջ կառուցել մեծ թվով սղոցարաններ, փայտաքիմիական ձեռնար-կություններ և այլն: ավարտել Կամայի և Կոնդուպոժի փայտանյութի ու թղթի կոմբինատի շինարարությու-նը, Սյասի փայտանյութի կոմբինատը, կառուցել Բաշ-կիրիայի և Կրասնոյարսկի թղթի կոմբինատները և այլն: Լախորեն ծավալել լայն սպառման առարկաների տեղական արդյունաբերության հաղարավոր ձեռնար-կությունների շինարարությունն ու վերակառուցումը՝ հնգամյակի տարեներին ներդնելով մինչև յերկու մի-լիարդ ռուբլի:

Քաղաքային շինարարության ասպարիզում լայն ծավալել հարյուրավոր արդյունաբերական Աենտրոն-ները բարեկարգ քաղաքների վերածելու աշխատանքը, կառուցել հազարավոր տներ ու բնակարաններ՝ սարքա-վորված բոլոր հարմարություններով, վորոնց բնակելի ընդհանուր տարածությունը պետք է հասնի 64 միլիոն քառ. մետրի: ծավալել սլանավորման, քաղաքային տրանսպորտի բարելավման, ջրամատակարարման, էլեկտրու, փողոցների սալահատակման ու ծառազարդ-ման և այլ աշխատանքներ: կառուցել խորհուրդների տներ ու տեխնիկայի տներ, կուլտուրայի ու հանգստյան սրահներ, ստադիոններ, թատրոններ, ակումբներ, կի-նո-թատրոններ, Մոսկվայում կառուցել Խորհուրդների

պաշտ, առաջին մետրոպոլիտենը ԽՍՀՄ-ում, վորի առաջին գիծը պետք է չահագործման հանձնվի արդեն 1934 թվականին:

16. Նոր չինարարության լայն ծախարման համար ուրվագծված ծրագիրը վճռական տեղաշարժեր է պայմանավորում արտադրողական ուժերի դասավորման գործում:

ա) Արդյունաբերական հին կենտրոնների զարգացման հիման վրա ինդուստրացման նոր հենակետային բազաներ են ստեղծվում Միության արևելյան շրջաններում (Ուրալ, Արևմտյան և Արևելյան Սիբիր, Բալկիրիա, Հեռավոր Արևելյան Յերկիր, Ղազախստան և Միջին Ասիա)։ Ինտենսիվորեն զարգանում են մեքենաչինությունը, մետաղագործությունը, ածուխը, նավթը, էլեկտրոններգիան և արդյունաբերության մյուս ճյուղերը: Արևելյան շրջաններում ծախավելու յե ծանր արդյունաբերության նոր չինարարությանը հատկացվող բոլոր կապիտալ ներդրումների մոտ կեսը: 1937 թվականին արևելյան շրջանները տալու յեն թուղի արտադրության մի յերրորդ մասը՝ 1932 թվականի մի քառորդի փոխարեն, քարածխի հանույթի ալելի քան մի յերրորդը՝ 1932 թվականի մի քառորդի փոխարեն, էլեկտրոններգիայի մոտ մի հինգերորդ մասը (շրջանային էլեկտրոկայանների)՝ 1932 թվականի 6,5 տոկոսի փոխարեն մեքենաչինության արտադրանքի մի տասներորդ մասը՝ 1932 թվականի 5 տոկոսի փոխարեն:

բ) Միության յերկրորդ ածխա-մետաղագործական բազայի— Ուրալ-կուզնեցկի կոմբինատի չինարարության ավարտումը, վորի չինարարության վրա յերկրորդ հնգամյակում ուղղվելու յե ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների մոտ մի քառորդ մասը և ծանր արդյունաբերության բոլոր կապիտալ ներդրումների ավելի քան մի յերրորդ մասը: Ուրալ-կուզնեցկի կոմբինատը պետք է 1937 թվականին տա սե մետաղագործության արտադրանքի

մի յերրորդը, յերկրի ածխի ընդհանուր հանույթի մի քառորդից ավելին, շրջանային էլեկտրոկայանների էլեկտրոններգիայի արտադրության մեկ վեցերորդը և մեքենաչինության արտադրանքի մոտ 10 տոկոսը:

գ) Արդյունաբերության մոտեցումը հումքի ալրյարներին՝ նոր շրջաններէ զարգացման հիման վրա: Խոշորագույն տեղաշարժերի յրադործումը թեթև և սննդի արդյունաբերության դասավորման գործում.— յերկրորդ հնգամյակում կառուցվող բամբակեղեն գործվածքների 15 կոմբինատներից տասի չինարարությունն ուրվագծվում է Միջին Ասիայում, Սիբիրում և Անդրկովկասում, վորը պայմանավորում է բամբակեղեն գործվածքների արտադրության աճը Միջին Ասիայում համարյա 16 անգամ, յերր ԽՍՀՄ-ում միջին աճը լինելու յե յերկու անգամ. այդպիսով տեքստիլ արտադրության հաստատուն բազա յե ստեղծվում այդ շրջաններում: Վուչի արդյունաբերության գծով վերամշակման հզոր բազաներ են ստեղծվում Արևմտյան մարդում, Գորկու յերկրում ու Բելոռուսիայում: Հումքի նոր բազաներ են ստեղծվում և նրանց հիման վրա յրականացվում է շաքարի նոր գործարանների չինարարությունը (Արևմտյան Սիբիր, Կիրգիզիա, Հեռավոր Արևելյան Յերկիր, Անդրկովկաս և այլն): Գյուղատնտեսական հումքի արտադրության հիմնական կենտրոններում ծախարվում է կաշվեղենի, բրդեղենի, ձիթհան և թեթև ու սննդի արդյունաբերության այլ ձեռնարկությունները չինարարությունը: Լայն չափով աճում է վառելանյութի տեղական տնտեսների հանույթը, վորը մեղմացնում է մի շարք շրջանների կախումը հեռավոր վայրերից փոխադրվող վառելանյութից:

դ) Գյուղատնտեսության բնագավառում— հացահատիկային արտադրության զգալի աճը հացահատիկային հիմնական շրջաններում, Անդրկովկաս շրջանի լայն փոռոգման աշխատանքի սկիզբը և ցորենի կայուն բազայի ստեղծումը կենտրոնական և հյուսիսային

չըջաններում, տեխնիկական մշակույթների արտադրանքի հսկայական աճը դրանց արտադրություն հիմնական շրջաններում՝ Արևելքում ճալնդեղի նոր բազայի ստեղծման հետ զուգընթաց, նոր բարձրագույն մշակույթների լայն զարգացումը հատկապես յենթաարևադարձային շրջաններում — ապահովում են գյուղատնտեսության հիմնական ճյուղերի ճիշտ դասավորման խնդրի լուծումը և շրջանների մասնադիտացումն ըստ մշակույթների ու ճյուղերի:

ե) Տրանսպորտի բնագավառում. — Արևելյան և հարավային ուղղությամբ ընթացող տրանսպորտային հիմնական մագիստրալների վերակառուցման ու ուժեղացման հետ միասին կառուցել յերկաթուղային և ջրային բաղմամբի նոր ուղիներ, վորոնք նոր ինդուստրիալ կենտրոնները կապելու յեն Միության ընդհանուր տրանսպորտային ցանցին և հանդիսանալու յեն նոր շրջանների տնտեսական զարգացման հիմքը (Կաբազանդա — Բալխաշ, Ուֆա — Ստերլիտամակ, Ռուր-ցովկա — Ռիզդեր, Տոմսկ — Չուլիմ, Բելոմորսկ — Բալթիական ջրանցքը և այլն):

զ) Արդյունաբերական լայն շինարարություն նախկինում արդյունաբերական տեսակետից այնպիսի հետամնաց շրջաններում, ինչպիսիք են Միջին Վոլգան, Թաթարստանը, Հյուսիսային Կովկասը, Կենտրոնական Սևահող մարզը, Անգրիդովկասը, Կարելիան, Մուրմանի յերկիրը, Հեռավոր Արևելքը, Արևելյան Սիբիրը և այլն, — այդ վայրերում խոշոր արդյունաբերությունը զարգացնելու հիման վրա:

է) Շինարարության ինտենսիվ զարգացումն ագագային հանրապետություններում ու մարզերում լուսավորության, առողջապահության, արվեստի ու մամուլի բնագավառներում:

ը) ԽՍՀՄ-ի հիմն արդյունաբերական շրջանների հետագա աճը՝ առաջին հնգամյակում սկսված մասնագիտացման խորացման և արդյունաբերության ներ-

շրջանային ավելի համասարաչափ դասավորման հիման վրա:

Համադրումարը նշում և, վոր յերկրորդ հնգամյակում արտադրողական ուժերի դասավորման համաբարձմանվող ծրագիրն ապահովում և ազգային հանրապետությունների ու մարզերի տնտեսական ու կուլտուրական հետամնացություն վերացումը, արտադրողական ուժերի ավելի հավասարաչափ դասավորումը և արդյունաբերության մոտեցումը հումքի աղբյուրներին, հիմնական շրջանների մասնադիտացումն ըստ գյուղատնտեսական մշակույթների ու ճյուղերի, ամբողջ յերկրի տնտեսական շրջանացման ավարտումը:

III

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԿՈՒՋՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԱԿԱՐ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵՍԻՐԸ

Գործադրկության վոչնչացումը, բոլոր բանվորների ու ծառայողների աշխատանքով ապահովված լինելը, յերբ միևնույն ժամանակ ինքնուրույն պետությունում սխառնատիկարար բարելավվում են նրանց աշխատանքի սլայմանները, մինչև 7 ժամի իջեցված բանվորական ուրը, նրանց արտադրական վորակավորումը և ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպաստավոր պայմանների առկայությունը — այս բոլորը հնարավորություն են տալիս բանվորների ու ծառայողների ամբողջ մասսային անշեղորեն բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, ավելի արագ թափով առաջ ընթանալ իրենց նյութական բարեկեցության բարելավման ուղիով:

Յերկրորդ հնգամյակի ընթացքում գյուղացիական տնտեսությունների ամբողջ մասսայի կոլեկտիվացման ավարտումը, կուլակության վերացումը, կուլակային դիմադրության բոլոր և ամեն տեսակ վորձերի ճնշումը, գյուղացիների ունևոր և չունևոր խավերի շերտավորվելու սլրոցեսի դադարեցումը և այդ կաշակցությունում աղքատացման ու պառակերկմի վոչըն-

Հացումը դյուղում, յերբ միևնույն ժամանակ կոլտնտե-
սությունները կազմակերպւոյն—տնտեսապէս անչեղ
կերպով ամրանում են և արագորին աճում և նրանց մե-
քենա—տեխնիկական բազան— այս բոլորն աննախըն-
թաց նպատակով պայմաններ են ստեղծում կոլտնտե-
սական—դյուղացիական մասսաների նյութական մա-
կարդակն արագորին բարձրացնելու և կոլտնտեսական-
ներին կուլտուրական ու ունեւոր կյանքի հասցնելու
համար և այդ վերելքի տեմպն ուղղակի կախման մեջ և
գնում իրենց՝ կոլտնտեսականների կազմակերպւածու-
թյունից ու աշխատանքի արտադրողականությունից:

Համապատասխան դրան համակարգիչուն տալով
Պետպլանի այդ տպարկիցում ուրվագծած նախագծին,
համադրումարը հետևյալ խնդիրներն և սահմանում բան-
վորների և դյուղի աշխատավորների նյութական ու
կուլտուրական մակարդակը բարձրացնելու ասպարի-
զում:—

1. ա) Բանվորների և ծառայողների քվի անը յեր-
կրորդ հնգամյակի վերջին ժողովրդական տնտեսու-
թյան բոլոր ճյուղերում 26 տոկոսով, այդ թվում խոշոր
արդյունաբերության մեջ՝ 29 տոկոսով:

բ) Ռեալ աշխատավարձի անումը 2 անգամ՝ պա-
րադիտային սպառումը վերջնականապէս վերացնելու,
ժողովրդական յեկամտի արագ աճման, մսի, յուղի,
էկան, ձվի, շաքարի և նման մթերքների ու արդյու-
նաբերական ապրանքների սպառման նորմաների 2,5
անգամով ավելացման, մանրածախի գների 35 տոկո-
սով իջեցման և աշխատավորության կենցաղային պայ-
մանների հետագա բարելաւման հիման վրա:

գ) Բանվորների և ծառայողների աշխատավարձի
ֆոնդի աճը ժողովրդական ամբողջ տնտեսության աս-
պարիզում 55 տոկոսով, այդ թվում խոշոր արդյունա-
բերության ասպարիզում՝ 64 տոկոսով:

դ) Բանվորների կուլտուր—կենցաղային սպասարկ-
ման վրա պետական ծախսումների զգալի բարձրացու-
մը, այսինքն՝ սոցիալական արտահովադրության գծով

կատարվող ծախսումների և բանվորների ու ծառա-
յողների լուսավորության, առողջապահության ու կուլ-
տուր—կենցաղային սպասարկման վրա պետության
ծախսումների բարձրացումը 4,3 միլիարդ ռուբլուց
մինչև 9,3 միլիարդ ռուբլու— հնգամյակի ընթացքում
աճ ավելի քան յերկու անգամ:

ե) Բանվորների և քաղաքի ու դյուղի աշխատա-
վորության ընդերկումը հասարակական սննդով ավե-
լացնել յերկու և կես անգամ:

զ) Յերկրորդ հնգամյակում ավարտել վոչ միայն
Միության բնակչության միջին անդրադիտության վե-
րացումը, աշխատունակ հասակավոր բնակչության կի-
սադրադիտության վերացումը և ընդհանուր պարտա-
դիր նախնական ուսուցման կիրառումը, այլ և իրակա-
նացնել ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկ ուսու-
ցումը՝ յոթնամյակի ծավալով՝ առաջին հերթին դյու-
ղում, քանի վոր քաղաքում այդ խնդիրը հիմնականում
արդեն լուծված և առաջին հնգամյակի ընթացքում
սովորողների թիվն ավելացնել (նախնական և միջնա-
կարգ դպրոցներում, բանֆակներում, ֆարգործու-
ներում, տեխնիկումներում, բուհերում և բուհներում)
մինչև 36 միլիոն հոգի՝ 1932 թվականի 24,2 միլիոն հո-
գու փոխարեն, կամ թե բնակչության 1000 հոգուն
մինչև 197 հոգի՝ 147-ի փոխարեն, չհաշված նախա-
դպրոցական կրթությունը, վորն արդեն 1932 թվակա-
նին ընդգրկում էր 5,2 միլիոն հոգի:

ե) Լայն զարգացնել մասսայական արտադպրոցա-
կան աշխատանքը, սերտորեն կապելով աշխատավոր
մասսաների կուլտուրական հանդուր կազմակերպման
հետ, ավելացնել ակումբային ցանցը թե՛ քաղաքում և
թե՛ դյուղում մինչև 10,9 հազարի՝ 6,8 հազարի փո-
խարեն (քաղաքներում ավելացումը 10,5 տոկոսով,
խիզ գյուղական վայրերում՝ 130 տոկոսով) և մասսա-
յական գրադարանների ցանցը մինչև 25 հազարի՝ 1932
թվականի 15 հազարի փոխարեն:

ը) Հետադաշում զգալիորեն ուժեղացնել աշխա-

տանքն աշխատավորութեան առողջապահութեան դժուր
և առաջին հերթին լայնորեն կիրառել սանիտարական-
պրոֆիլակտիկ միջոցառումները. առողջապահու-
թեան, բանվորական հանգստի և ֆիզիկուլտուրայի վրա
ծախսումներն ավելացնել առաջին հնգամյակի 5,4 մի-
լիարդ ռուբլուց մինչև 19,6 միլիարդ ռուբլի:

Հիվանդանոցային մահճակալները աճը քաղաքնե-
րում 44 տոկոսով, գյուղական վայրերում՝ 93 տոկո-
սով, մանկամսուրային տեղերի աճը քաղաքներում՝
164 տոկոսով, գյուղական վայրերում՝ 129 տոկոսով:

Թ) Հնգամյակի ընթացքում ջրմուղ ունեցող քա-
ղաքների թիվն ավելացնել 366-ից մինչև 440-ի, կոյու-
ղի ունեցող քաղաքներինը՝ 55-ից մինչև 125-ի, տրամ-
վայ ունեցող քաղաքներինը՝ 50-ից մինչև 70-ի:

Ճ) Դրան համապատասխան կոմունալ, բնակարա-
նային և կուլտուրական շինարարութեան կապիտալ
ներդրումները յերկրորդ հնգամյակում սահմանել մոտ
32 միլիարդ ռուբլու չափով, կամ Թե ԽՍՀՄ-ի ժողո-
վրդական տնտեսութեան բոլոր կապիտալ ներդրում-
ների մոտ մի քառորդը, այդ թվում՝ բնակարանային
շինարարութեան մեջ՝ 13,4 միլիարդ ռուբլի, քաղա-
քային կոմունալ շինարարութեան մեջ՝ 6,2 միլիարդ
ռուբլի, լուսավորութեան մեջ՝ 3,1 միլիարդ ռուբլի,
առողջապահութեան մեջ՝ 2,9 միլիարդ ռուբլի:

2. Բանվորների և գյուղացիների կյանքի նյութա-
կան մակարդակի բարձրացման խնդիրը պահանջում է
ամեն կերպ ծավալել ապրանքաշրջանառութունը՝ լայն
սպառման արդյունաբերական ապրանքների արտա-
դրութեան ավելացնելու և գյուղատնտեսական միջեր-
ներով քաղաքի մատակարարումը բարելավելու հիման
վրա:

Դրան համապատասխան համագումարը սահմա-
նում է.—

ա) Ապրանքաշրջանառութեան աճը յերկու և կես
անգամ.— 1932 թվականի 31,9 միլիարդ ռուբլուց մին-
չև 80 միլիարդ ռուբլի 1937 թվին (1932 թվականի գնե-

րով), Թե Թե և սննդի արդյունաբերութեան դժուր ար-
տադրվող լայն սպառման առարկաների արտադրու-
թեանը յերկու և կես անգամ ավելացնելով:

բ) Պետական-կոոպերատիվային մանրածախ ա-
ռևտրի ցանցի աճը 37 տոկոսով, միաժամանակ տեխ-
նիկապես վերակառուցելով այն:

գ) 1933 թվականի համեմատութեամբ մանրածախի
գները միջին մակարդակն իջեցնել 35 տոկոսով:

3. Համագումարը ժողովրդական յեկամտի աճը
սահմանում է 45,5 միլիարդ ռուբլուց մինչև 100 մի-
լիարդ ռուբլի, կամ Թե 2,2 անգամ, և ժողովրդական
յեկամտում սպառման ֆոնդի աճը 2,4 անգամ, միա-
ժամանակ հսկայական չափով ավելացնելով կուտա-
կումները հանրայնացված տնտեսութեան մեջ, ինչպես
նաև ավելացնելով պետական ռեզերվները:

Համագումարն ընդգծում է, վրա տնտեսական
դործունեյութեան հիմքը պետք է կազմի ժողովրդական
տնտեսութեան բոլոր ողակներում տնտեսաշխարհն ար-
մատացնելու համար մղվող պայքարը, պլանային-ֆի-
նանսական կարգապահութեան ուժեղացումը, խորհրդ-
ային ռուբլու—քաղաքի ու դյուղի միջև տնտեսական
կապերի ամրացման և տնտեսաշխարհն ուժեղացնելու
այդ կարևորագույն լծակի հետագա կայունացումը:

Համկ(բ) XVII համագումարը սահմանում է, վրա
Միութեան Պետականի ներկայացրած և Համ կ(բ) VI
Կենտկոմի ու ԽՍՀ Միութեան ժողկոմխորհի կողմից
ընդունված ժողովրդական տնտեսութեան զարգացման
յերկրորդ հնգամյա պլանն ապահովում է.—

ա) Կապիտալիստական տարրերի և ընդհանրապես
դասակարգերի լիկվիդացիան, գյուղացիական տնտե-
սութեանների կոլեկտիվացման լիակատար ավարտման
և բոլոր տնայնագործների կոոպերացման հիման վրա
արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութեան

վերջնական լիկվիդացիան, Խորհրդային Միության
էկոնոմիկայի բաղաձեռնության լիկվիդացիան և ար-
տադրութեան սոցիալիստական յեղանակի հաստատու-
ւել գործակա արտադրութեան միակ յեղանակի, յերկրի
վողջ աշխատավոր ընակչութեանը վերածելով սոցիա-
լիստական հասարակութեան ակտիվ ու գիտակից կա-
ռուցողներին:

բ) ԽՍՀՄ-ի ժողովրդական վողջ տնտեսութեան
տեխնիկական վերակառուցման ավարտումը՝ առաջին
հնգամյակի ընթացքում ստեղծված և հետագա արագ
վերելքի ուղիով ընթացող արտադրութեան միջոցներ
արտադրող արդյունաբերութեան (ծանր արդյունաբե-
րութեան) բաղաչի վրա:

գ) Բանվորական և գյուղացիական մասնաների
բարեկեցութեան ավելի արագ վերելք, ըստ վորում
բնակարանային և կոմունալ վողջ գործի վճռական բա-
րելավումը ԽՍՀՄ-ում:

դ) Գյուղացիութեան հետ բանվոր դասակարգի
դաշինքի հիման վրա պրոլետարական գիկտատուրայի
տնտեսական և քաղաքական գիլքերի ամրապնդումը՝
կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասա-
կարգերի վերջնական լիկվիդացիայի համար:

ե) Յերկրի պաշտպանունակութեան հետագա ամ-
րապնդումը:

Այդ խնդիրներն իրագործումը, վորը տանում է
դեպի կապիտալիստական տարրերի վերջին մնացորդ-
ներն արտամղումն իրենց բոլոր հին գիլքերից և վերջ-
նական կործանման ե դատապարտում նրանց, չի կա-
րող առաջ չբերել դասակարգային պայքարի սրում:
կուլակութեան կողմից կոլտնտեսութեանները քայքա-
յելու նոր փորձեր, հակախորհրդային ուժերի կողմից
մեր արդյունաբերական ձեռնարկութեանները վնասա-
բարական սարսուռի յենթարկելու փորձեր: Մյուս
կողմից՝ յերկրորդ հնգամյակի խնդիրների իրագոր-
ծումը, հնգամյակ, վորը ժողովրդական վողջ տնտե-
սութեան տեխնիկական վերակառուցումն ավարտելու

հիման վրա արմատականորեն բարձրացնելու յե բան-
վորական և գյուղացիական մասնաների կենսական
մակարդակը, չի կարող չվողեւորել աշխատավորու-
թեանը, չի կարող աշխատավորութեան լայն մասնանե-
րում—սոցիալիզմի կառուցողների մեջ—աբաղբրական
ակտիվութեան վերելք և նոր տեխնիկային տիրապետե-
լու աճող ձգտում չառաջացնել:

Անողորմաբար ջախջախելով դասակարգային թշնա-
մու հակահեղափոխական յելույթները և յերկրորդ հնգ-
ամյա պլանի հաղթական կատարման համար համա-
լամբելով սոցիալիզմի հարվածայինների շարքերը, բան-
վոր դասակարգը, կոլտնտեսական մասնաների հետ
միասին, կուսակցութեան ղեկավարութեամբ, վորն ան-
չեղ պայքար է մղում ամեն տեսակի ոտորտունիզմի դեմ,
կհաղթահարի սոցիալիզմի շինարարութեան ճանապար-
հին բոլոր և ամեն տեսակի դժվարութեանները:

Համկ(բ) ԽՍՀՄ համադումարը մատնանշում է,
վոր յերկրորդ հնգամյա պլանի, ժողովրդական տնտե-
սութեան ընդհանուր տեխնիկական վերակառուցման
պլանի կատարումը պահանջում է գործի աշխատի կազ-
մակերպութեան, վորի ժամանակ ապահովված լինեն—

Առաջին.— Ամենորյա տնտեսական ղեկավարու-
թեան ողերատիւութեան և կոնկրետութեան, վորը չի
հաշտվում բյուրոկրատական խեղաթյուրումների հետ՝
տնտապարտում:

Յերկրորդ.— Լավագույն ինժեներա-տեխնիկական
ուժերի կենտրոնացումն արտադրական վճռական վա-
րերում և վոչ թե հիմնարկութեաններն գրասենյակնե-
րում:

Յերրորդ.— Բանվորների աշխատավարձի ճիշտ
կազմակերպումը, վորն ապահովի աշխատանքի արտա-
դրողականութեան աճի նյութական խրախուսումը:

Չորրորդ.— Սոցիալիստական մրցութեան դործի
բարձրացումը, առանձնապես նոր տեխնիկայի և նոր
արտադրութեանների լավագույն յուրացման նպատա-
կով:

Հինգերորդ.—Արտագրական ամուր կարգապահ-
հաշիւուն ինչպէս արդյունաբերական ձեռնարկություն-
ներում և խորհրդատեսություններում, նույնպէս և կող-
մնատեսություններում:

Վեցերորդ.—Հեղափոխական զդոնություն սլորել-
տարիատի գիկատատուրայի թշնամիների դեմ և հանձ-
նարարված գործի համար իսկական պատասխանատու-
թյուն բանվոր դասակարգի և նրա կուսակցութեան ա-
ռաջ:

Յոթերորդ.—Բանվորների և աշխատավոր գյուղա-
ցիների դաշինքի հետագա ամրապնդումը:

Յերկրորդ հնգամյակում ԽՍՀՄ-ն խոշոր քայլ է կա-
տարում դեպի առաջ մարդկային հասարակութեան դա-
բավոր հակադրութեան—քաղաքի և գյուղի հակադրու-
թեան—վերացման գործում և ստեղծում է այդ հակա-
դրութեան վերացման բոլոր անհրաժեշտ նախադրյալ-
ները: Գյուղատնտեսութեան իր հասարակական ձեռք
դառնում է արդյունաբերութեան հետ նույնատիպ.
գյուղատնտեսական աշխատանքը դառնում է ինդուս-
տրիալ աշխատանքի մի այլաձևութեան. հզոր կերպով
աճում են քաղաքի և գյուղի տրանսպորտային կապե-
րը, զգալի չափով մերձենում են արդյունաբերութեան
և գյուղատնտեսութեան արտադրութեան աճի տեմպերը,
մերձենում են քաղաքի և գյուղի աշխատավորութեան
նյութական բարեկեցութեան և կուլտուրայի մակար-
դակները:

Յերկրորդ հնգամյակում ԽՍՀՄ-ն դառնում է տեխ-
նիկական—տնտեսական տեսակետից անկախ յերկիր և
տեխնիկապես ամենաառաջավոր պետութեանը Յեւրո-
պայում:

Յերկրորդ հնգամյակի կատարումն է՛լ ավելի կու-
սեղացնի ԽՍՀՄ-ի նշանակութեանը վորպէս միջազգա-
յին պրոլետարիատի պայքարի նեցուկի, համայն աշ-
խարհի չահագործվող աշխատավորական մասսաների
աչքին է՛լ ավելի կրարճրացնի Խորհուրդների յերկրի
հեղինակութեանը վորպէս համաշխարհային պրոլե-

տարական հեղափոխութեան հենակետային բաղադրի:
Սոցիալիզմի շինարարութեան պատմական նոր մեծ
հաղթանակներն է՛լ ավելի կամրապնդեն Խորհրդային
Միութեան մարտական հզորութեան տնտեսական հիմքը,
նրա ընդունակութեանը հետ մղելու և խորտակելու
պրոլետարական պետութեան թշնամիների բոլոր վո-
տընձգութեանները: ԽՍՀՄ-ի հզոր տնտեսական վերել-
քը և ԽՍՀՄ-ի աշխատավորական մասսաների բարեկե-
ցութեան անչեղ աճը, կապիտալիստական յերկրներում
տիրող ճգնաժամի պայմաններում է՛լ ավելի ցայտուն
կերպով կապացուցեն տնտեսութեան սոցիալիստական
սխտեմի սուսվելութեանները կապիտալիստականի
հանդեպ և կապիտալիստական ստրկութեան սխտեմի
պատմականորեն մահվան դատապարտված լինելը, է՛լ
ավելի լիակատար կերպով յերևան կհանեն հեղափոխա-
կան պրոլետարիատի հսկայական ստեղծագործական
ուժերը, պրոլետարիատի, վորն իր ձեռքն է վերցրել
իշխանութեանը և անդատակարգ սոցիալիստական հա-
սարակութեան կառուցման համար մղվող հերոսական
պայքարում ամրացնում է իր գիկատատուրան:

ՀամԿ(բ)Կ XVII համագումարը կուսակցութեան
բոլոր անդամներից պահանջում է բոլշևիկորեն պայքա-
րել յերկրորդ հնգամյա պլանի հաղթանակի համար և
կոչ է անում բանվորներին ու կոլտնտեսականներին՝
համախմբվել կուսակցութեան շուրջը՝ այդ պատմական
խնդիրը կատարելու համար:

10 փետրվարի 1934 թ.

VI

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑՆԵՐ

(ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑԵՎ ԵՌԱՐԻԱՅԻՆ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

ՀամԿ(բ)Կ XVII համագումարի բանաձևով ընդ. Լ. Կազանովիչի գեղուցման տարիվ
(Ընդունված է միաձայն)

Չնայած դատակարգային թշնամիների կատաղի դի-
մադրութեանը և դասակարգային թշնամիների գործա-

կալության—ամեն դույնի սպորտունիստներին—կուսակցության գեմ սղած գրուներին՝ կուսակցության քաղաքականությունը, նրա կենտկոմի քաղաքականությունը հալթանակեց: Հաղթանակեց նախ այն պատճառով, վոր այդ քաղաքականությունը համապատասխանում է միլիոնավոր բանվորներին և գյուղացիներին դասակարգային շահերին, յերկրորդ՝ այն պատճառով, վոր բոլշևիկյան կուսակցությունը, նրա կենտկոմը վոչ միայն հռչակեցին քաղաքական լուրջագներ, այլև կարողացան բոլշևիկորեն, գործնականորեն կազմակերպել մասսաներին այդ լուրջագները կենտագործելու համար, կազմակերպել ու վերակառուցել պրոլետարական գիկատատերայի բոլոր որդաններն ու ապարատները վերակառուցման ժամանակաշրջանի նոր խնդիրներին համապատասխան:

Կուսակցության 16-րդ համագումարում, քնորոշելով վերակառուցման ժամանակաշրջանի բոլշևիկյան հարձակման էյությունը, ընկ. Սաալինը մատնանչեց, վոր անհրաժեշտ է.

«Կազմակերպել արհմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և մնացած բոլոր մասսայական կազմակերպությունների գործնական ամբողջ աշխատանքի վերակառուցումը՝ վերակառուցման ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, այդ կազմակերպությունների մեջ ստեղծել առաջել ախիվ և հեղափոխական աշխատողների կորիզ, գուրս մղելով, մեկուսացնելով ոպորտունիստական, տրեդ-յունիոնիստական, բյուրոկրատական տարրերին, գուրս վտարել այդ կազմակերպություններից խորթ ու աշխատանքիված տարրերին, և առաջ քաշել նոր աշխատողներ ներքևից... մոբիլիզացիայի յենթարկել իրեն՝ կուսակցությանը՝ հարձակման ամբողջ գործը կազմակերպելու համար, ամրացնել և սրել կուսակցական կազմակերպությունները»:

Ղեկավարվելով այս ցուցումներով, կուսակցու-

թյունը հաջկետու ժամանակաշրջանում լուրջ միջոցառումներ կիրառեց բարելավելու խորհրդային, տնտեսական և կուսակցական կազմակերպությունների աշխատանքը, վերահասուցելու նրանց աշխատանքը կուսակցության ու կառավարության վորոշումներն ու լուրջագները հաջողությամբ կատարելու պահանջների համապատասխան:

Այս ձեռնարկումներից ամենախոշորներն են յեղել.

1. Շրջանացման հետագա ծավալումը—տիրուզների վերացումը, նոր շրջանների ստեղծումը, ՄՏ կայանների ու խորհանտեսությունների քաղբաժինների կազմակերպումը, վորոնք ղեկավարությունը մոտեցրին գյուղին ու կոլանտեսությանը և ուղղեցին գյուղի աշխատանքի խոշորագույն թերությունները, մարդերի կազմակերպումը Ռւկրայինայում, մի քանի մարդերի ու յերկրների մանրացումը և այլն:

2. Ժողկոմատների, գլխավոր վարչությունների և տրեսաների մանրացումը, վորը ղեկավարությունը մոտեցրեց արտադրական ստորին ողակներին, ձեռնարկություններին. ԺՏԳԽ—ի բաժանումը յերեք ժողկոմատների՝ Մանր արդյունաբերության, Թեթև արդյունաբերության և Անտառ-ժողկոմատի. Հող-ժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի՝ Հող-ժողկոմատի և Խորհանտե-ժողկոմատի. Առևտրի ժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի՝ Մատ-ժողկոմատի և Արտաքին տուտրի ժողկոմատի, Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի և մեկ վարչության՝ Հաղճան-ժողկոմատի, Զր-ժողկոմատի և Տրանսպորտի կենտվարչության և այլն:

3. Խորհրդային, տնտեսական որդանների գտումը և նրանց հաստիքների կրճատումը.—Փունկցիոնայության վերացումն անխարդյունաբերության մեջ ու յերկաթուղային տրանսպորտում՝ նպատակ ունենալով պայքարել ղեկավարման գրասենեկային-բյուրոկրատական մեթոդի ու գիմագրկության դեմ, ինժեներտեխնիկական լավագույն աշխատողներին ապարատից

ու գրասենյակից անմիջականորեն արտադրութեան մեջ փոխադրելը:

4. Արհմիութեան ներքին մասնագումը, վորը հանգեցրեց արտադրական միութեան ներքին կենսական գործունեությանը. մատակարարման սխալներ վերականգնող. — բանվորական մատակարարման բաժինների կազմակերպումը գործարանային վարչութեան ներքին կից, ընդարձակելով նրանց իրավունքները և բանվորական վակ կոոպերատիվների կազմակերպումը:

5. Քաղաքական բաժինների կազմակերպումը յերկաթուղային և ուղային տրանսպորտում, կուսակազմակերպչների սխալներ կազմակերպումն ածխի և արգյունարերութեան այլ ճյուղերում, այդ թվում նաև Զրթողկոմատում:

6. Կուսակցութեան գուման ծավալումը վորպես կուսակցական ինքնաբնադատութեան բարձրագույն ձևի, կուսակցութեան՝ վորպես սոցիալիստական շինարարութեան կազմակերպչած ավանգարդի՝ ամրացումը:

Այս աշխատանքի հաջողութեան ապահովելը ինքնաբնադատութեան ծավալումով, մասնաճյուղերի ակտիվութեան մոբիլիզացիայով՝ ստեղծարար շինարարական աշխատանք կատարելու համար, սոցիալիստական մըրցութեամբ ու հարվածայնութեամբ:

Կուսակցութեան կողմից այս բոլոր կազմակերպական հարցերի ժամանակին զնելը, դրանց կենսագործումը կուսակցութեանն ու սոցիալիստական շինարարութեանն ապահովելին այն խզումից, վոր կարող եր առաջանալ կուսակցութեան ճիշտ գծի և նրա իրականացման կազմակերպչական աշխատանքի միջև:

ՀամԿ(բ)Կ XVII համագումարը գտնում է, վոր չնայած արդիատարական գիտատեղային լծակների վերականգնողման գործում ձեռք բերած հաջողութեաններին, կազմակերպական-գործնական աշխատանքը գեղես հետ է մնում քաղաքական գիտելիքների պահանջներից և չի բավարարում ներկա ժամանակաշրջանի վիթխարի չափերով աճած պահանջները:

Սոցիալիստական շինարարութեան ներկա ժամանակաշրջանը բնորոշվում է խնդիրների ավելի մեծ բարդացումով, դեկավարութեանն առաջագրվող պահանջների ել ավելի մեծացումով: Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները — կապիտալիստական տարրերի վերջնական վերացումը, կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը եկոնոմիկայում և մարդկանց գիտակցութեան մեջ, ժողովրդական ամբողջ անասութեան վերականգնողման ավարտումը նորագույն տեխնիկական բազայի վրա, նոր տեխնիկայի և նոր ձեռնարկութեանների յուրացումը, գյուղատնտեսութեան մեքենայացումը և նրա արդյունավետութեան բարձրացումը — իրենց ամբողջ սրութեամբ դնում են աշխատանքի վորակի բարձրացման հարցը բոլոր ասպարեզներում, առաջին հերթին՝ կազմակերպական-գործնական գիտելիքայնութեան վորակի բարձրացման հարցը:

Այժմ, յերբ հաղթանակել է կուսակցութեան գըլխավոր գիծը, յերբ կուսակցութեան քաղաքականութեանն ստուգված է կյանքում վոչ միայն կուսակցութեան անդամների, այլև միլիոնավոր բանվորների ու աշխատավոր գյուղացիների փորձով — իր ամբողջ մեծութեամբ խնդիր է դրվում կազմակերպական աշխատանքը քաղաքական գեկավարութեան մակարդակին բարձրացնելու: Կազմակերպական հարցը յենթարկված մնալով քաղաքականութեան հարցերին, այնուամենայնիվ այս տեսակետից բացառիկ նշանակութեուն է ստանում սոցիալիստական շինարարութեան հետագա հաջողութեանների համար:

«Հաղիվ թե վորևե մեկը տնդի, վոր բավական է տալ քաղաքական լավ գիծ, և գործը վերջացած է: Վո՛չ, սա գործի միայն կեսն է: Քաղաքական ճիշտ գիծ տալուց հետո անհրաժեշտ է աշխատողներ ընտրել այնպես, վոր գիրքերում կանգնած լինեն այնպիսի մարդիկ, վորոնք կարողանան իրականացնել գիրքեկտիվները, վորոնք կարողանան ըմբռնել գիրքեկտիվները, կա-

ըողանան այդ դիրեկտիվներն ընդունել իբրև իրենց հաճախող դիրեկտիվներ և կարողանան դրանք կենսագործել: Հակառակ դեպքում քաղաքականությունը կորցնում է իր խմայտը, դառնում է ձեռքի թափահարություն» (Մտալիս):

Մինչդեռ լավագույն ղեկավար աշխատողներից նույնիսկ շատերը մինչև այժմ դեռ կարծում են, վոր բավական է ճառ արտասանել կամ կուսակցության գլխավոր գծին հավատարիմ լինելու բանաձև դրել: Վորպեսզի ղեկավարության խնդիրը համարվի լուծված, մինչդեռ այդ նույն ղեկավար աշխատողների կարգադրությունները, վորոնց նպատակն է կիրառել կուսակցության դիրեկտիվները, գործնականում խախտվում են վատ ընտրված աշխատողների ձեռքով և կատարումն ստուգելու բացակայության պատճառով:

Կադմակերպական-գործնական աշխատանքի հետ մնալը կուսակցության քաղաքական գծի պահանջներից ալյալ մոմենտում առանձին ցայտունությամբ ու սրությամբ հայտարարեց կուսակցության Կենտրոնական Կոմիտեն՝ ածխային արդյունաբերության, յերկաթուղային տրանսպորտի և Հողօդային տրանսպորտի մեջ զարգացման օրինակով:

Համապատասխան չլուծված է, վոր այս թերությունները վերաբերում են խորհրդային, տնտեսական և կուսակցական աշխատանքի նաև մյուս մարզերին:

Այս թերություններից ամենագլխավորներն են.—

Ղեկավարման գրասենեկային-բյուրոկրատական մեթոդները և անուշադիր վերաբերմունքը դեպի խորհրդային, տնտեսական և կուսակցական ստորին որգանները (գործարան, ցեխ, գյուղ, կոլտնտեսություն, խորհտնտեսության բաժանմունք):

«Ընդհանուր», վերացական դիրեկտիվներ և բաղմաթիվ հրամաններ աալը, փոխանակ կոնկրետ ղեկավարություն ցուցաբերելու և աշխատանքի մանրամասնություններն ուսումնասիրելու:

Կատարումն ստուգելու, կադրեր ընտրելու պար-

տականությունը ցածորակ աշխատողների վրա դնելը:

Խորհրդային և տնտեսական ապարատի կենսական ու միջին ողակների հասարկների ուղեցումը, վորն արտադրությունից դրասենյակ է գրավում զգալի քանակությամբ ինժեներ-տեխնիկական աշխատողներ:

Ապարատի Փունկցիոնալ կառուցումը, կառավարման գործի ապակենտրոնացումը տառնյակ բաժինների ու սեկտորների միջև և, վարպետ այս բանի հետևանք, ոպերատիվ ղեկավարության բացակայությունը:

Միանձնյա ղեկավարության ծայրահեղ թուլությունը, անձնական պատասխանատվության բացակայությունը և կառավարման դիմադրկությունը՝ թագնված ղեկավարության «կոլեգիալության» տակ:

Կուսակցության ու պետության յերկաթյա կարգադրության բացահայտ և քողարկված խախտումները:

Այս բոլոր թերությունները վերացնելու և պրոետարական դիկտատուրայի բոլոր որդանների աշխատանքը բարելավելու համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ դրույթներով.

Առաջին.—«Ընդհանուր» և վերացական ղեկավարությունից անցնել կոնկրետ ղեկավարության, «Ընդհանուր» բանաձևերից՝ ոպերատիվ վորոշումների, վորոնք հիմնված լինեն գործի տեխնիկական և մանրամասնություններն ուսումնասիրելու և իմանալու վրա, անցնել սերտ և կենդանի կապի՝ արտադրության ու կառավարման ստորին ողակների հետ (ցեխ, աշխատամաս, ձեռնարկություն, կոլտնտեսություն, գյուղ, ՄՏկայան, խորհտնտեսություն և այլն):

Յերկրորդ.—ուժեղացնել ղեկավարների անձնական պատասխանատվությունը նրանց հանձնարարված գործի համար՝ ինչպես կուսակցական, այնպես էլ խորհրդային գծով. վերացնել Փունկցիոնալությունը և դիմադրկությունն աշխատանքում, տահանելով խախտման ղեկավարություն:

Յերրորդ.—աահմանել կուսակցության և կառա-

Պարբերական գեղեկությունների կատարման սխառմատիկ, մանրագին ստուգում, այն հաշվով, ի՞նչ կատարման ստուգումով անձնապես զբաղվի կազմակերպության, հիմնարկի, ձեռնարկություն գեղեկարար, վորսկեղի կատարման ստուգումն ապահովի կուսակցական և խորհրդային կարգապահության ամրացումը:

Զորքորդ.—ապահովել վորակյալ աշխատողների տեղափոխումն ապարատից և զբաղենյակից անմիջապես կանոնն գեղի արտադրություն՝ կրճատելով կառավարման ապարատները, և բարելավել աշխատողների բաշխման դործի գրվածքը, պարտադրելով հիմնարկի և ձեռնարկության գեղեկարարին անձամբ գեղեկարարելու աշխատքը:

Այս խնդիրների հաջող իրականացման անհրաժեշտ պայմանը համապատասխան համարում ե ինքնաքննադատություն, սոցմրցման, կուսակցական, բանվորական, կուլտնտեսական մասսաների ու նրանց մասսայական կազմակերպությունների ակտիվություն ու ինքնադործունեություն հետագա ծավալումը:

Կուսակցության XVII համագումարն առաջարկում ե կենսագործել հետևյալ կազմակերպական միջոցառումները:

I

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՐՈՒԹՅԱՆ

ՅԵՂ ԱՊԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մի շարք վայրերում կատարված կուսակցություն մեջ մեխանիկորեն ու անխտիր ընդունելությունը վերացնելու նպատակով՝ կուսակցության անդամ ու թեկնածու ընդունելիս սահմանել յերաշխավորությունների մեծացրած թիվ և յերաշխավորողների կուսակցական ստաթի բարձրացում. կուսակցության մեջ ընդունել միայն ակտիվիստներին, վորոնք իրենց ցուցա-

դրել են այս կամ այն հատարակական կազմակերպություն մեջ կատարած աշխատանքում, ապահովել ընդունվողների մանրակրկիտ ստուգումը, այս դեպքում գնահատականներ պահանջելով այն կազմակերպությունից, վորտեղ աշխատել ե ընդունվողը:

2. Կուսակցության մեջ ընդունելն ու թեկնածունեություն անդամ փոխադրելը վերսկսել ամբողջ կուսակցություն զտումն ավարտելուց հետո, այսինքն 1934 թվի յերկրորդ կեսից:

3. Նպատակ ունենալով համ Կ(բ)Կ շուրջը համախմբել կուսակցությանն առաջնապես մոտիկ անկուսակցական ակտիվիստներին, վորոնք դործով—արտադրության մեջ, կուլտնտեսության մեջ—ցուցաբերել են իրենց ակտիվ ոգնությունը կուսակցությանը, բայց դեռ անպատրաստ են կուսակցության մեջ ընդունվելու համար, կուսակցական ստորին կազմակերպություններին կից ստեղծել համ Կ(բ)Կ համակրողների խմբակներ, վորոնք անպայման պիտի յենթարկվեն կուսակցական մարմինների բոլոր վորոշումներին:

4. Գտնելով, վոր ներկայումս կուսակցական բջիջներն ինչպես իրենց կազմով, այնպես ել իրենց խնդիրներով և փաստական աշխատանքով գերածել են հին տիպի բջիջների շրջանակներից, համադումարը վորոշում ե գոյություն ունեցող կուսակցական բջիջները վերափոխել իբրև դործարանային, տրանսպորտային, կարմիր բանակային, կուլտնտեսական, բուհական, հիմնարկային և այլ կուսակցական կազմակերպությունների՝ կուսակցական կոմիտեյի գլխավորությամբ (կարմիր բանակային կուսակցական կազմակերպություններում՝ կուսբյուրո), իսկ ցեխերում, հերթափոխություններում, բաժանմունքներում՝ ցեխային կազմակերպությունների՝ կուսակցական կազմակերպչի գրչխավորությամբ, վորն ընտրվում ե ավյալ կուսկազմակերպության ընդհանուր ժողովում և հաստատվում դործարանային կուսակցական կոմիտեյի կողմից:

Կուսակցական այն կազմակերպություններում, վոր-

բոնց կուսանդամներն ու թեկնածուները 15-ից պակաս են, կուսկոճիտներ չստեղծել, այլ ընտրել կուսակցական կազմակերպիչներ:

Յերեք հոգուց պակաս կուսանդամ ունեցող կուսանտեսություններում ստեղծել թեկնածուական կամ կուսակցական կոմիտեի տալիս խմբակներ՝ կուսկազմակերպիչների գլխավորությամբ, վորոնց առանձնացնում են ՄՏ կայանների քաղբաժինները, իսկ ՄՏ կայանների կողմից չսպասարկվող կուսանտեսություններում՝ չորս կոմները:

ԿԵՆՏՐՈՆԻ, ՄԵՐՁԵՆ, ԾՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄՍՈՐԱՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԳՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՈՒԹՎԱԾՐԻ ՄԱՍԻՆ

5. Վերակառուցել Համ Կ(բ)Կ մարզկոմներին, յերկրկոմներին ու Կենտկոմի բաժինները, վերացնելով ներկայիս փախկցիոնալ բաժինները և նրանց փոխարեն ստեղծելով ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ: Յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում, Կենտկոմի Գյուղատնտեսական բաժնի որին նախել, կենտրոնացնել տվյալ ճյուղին վերաբերող ամբողջ աշխատանքը. կուսկազմակերպական աշխատանքը, կադրերի բաշխումն ու պատրաստումը, ազխտ-մասսայական աշխատանքը, արտադրական պրոպագանդը, և համապատասխան խորհրդային, անտեսական օրգանների ու կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վորոշումների կատարմանը հսկելը: Մահմանել բաժինների հետևյալ կառուցվածքը.

Համ Կ(բ)Կ Կենտկոմում.—1) Գյուղատնտեսական բաժին, 2) Արդյունաբերական բաժին, 3) Տրանսպորտային բաժին, 4) Գյանային-ֆինանսա-առևտրական բաժին, 5) Գաղաքական-վարչական բաժին, 6) Ղեկավար կուսորդանների բաժին, 7) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժին, 8) Մարքսի-Ենգելսի-Լենինի ինստիտուտ, և յերկու սեկտոր՝ Գործերի կառավարման սեկտոր և Հատուկ սեկտոր:

Մարզկոմներում.—յերկրկոմներում.—1) Գյուղա-

տնտեսական, 2) Արդյունաբերական-արտադրային, 3) Խորհրդային-առևտրական, 4) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, 5) Ղեկավար կուսորդանների (քաղաքային և չրջանային) և Հատուկ սեկտոր:

Մարզկոմներում.—յերկրկոմներում և ազգային կոմիտեների կենտկոմներում վերացնել քարտուղարությունները, թողնելով յերկուսից վոչ ավելի քարտուղար՝ առաջին և յերկրորդ (բացի Ուկրայինայի Կ(բ)Կ-ից, Մոսկվայի և Լենինգրադի մարզկոմներից, վորտեղ պահպանվում են քարտուղարությունները): Քրե-նարկում պահանջող հարցերը մտնել ուղղակի բյուրոն, իսկ մի շարք գործնական հարցերի մշակումը հանձնարարել Ղոչ Թե հատուկ հանձնաժողովների, այլ կոմիտեների բաժինների վարիչներին, խորհրդային, արհմիութենական, կոոպերատիվ, կոմյունիստական և այլ կազմակերպությունների ղեկավար աշխատողներին:

6. Վերակառուցել չբլկոմների աշխատանքը՝ մոտեցնելով նրանց արտադրական խնդիրներին. ուժեղացնել չբլկոմի կոնկրետ ղեկավարությունը տեղիատրիալ կուսակցական կազմակերպությունների, գյուղխորհուրդների նկատմամբ, և քաղբաժինների հետ միասին չբլանի ամբողջ կուսանտեսական կազմակերպությունների նկատմամբ, ամրացնելով դրանք աշխատողներով: Շրջկոմներում, քաղկոմներում վերացնել (բացառությամբ խոշորագույն քաղաքների քաղկոմների ու աշխկոմների, վորոնք սահմանվում են ԿԿ-ի հատուկ վորոշումներով) բոլոր բաժինները, դրանց փոխարեն ունենալ չբլադայող սլատասխանատու հրահանգիչներ—չբլկոմների, քաղկոմների անդամներ—նրանց յուրաքանչյուրին ամրացնելով սկզբնական կազմակերպությունների վորոշակի խմբի, վորոնց մեջ նրանք սլադատավոր են կազմակերպել կուսակցական աշխատանքի բոլոր ճյուղերը—կուլտուր-քաղաքագրական, ազխտացիոն-մասսայական, կազմակերպական և այլն: Երահանգիչների աշխատանքի ղեկավարությունը, կազ-

րերի բաշխումը, կատարման ստուգումը դնել քարտուղարի և նրա տեղակալի վրա:

7. Հավանություն տալ ՀամԿ(բ)Կ կենտկոմի այն փորձաշուկաներին, փորձնք վերաբերում են ՄՏ կայաններում, խորհանտեսություններում, յերկաթուղային արանապարտում քաղաքական բաժիններ կազմակերպելուն, փորձնք ամբողջովին արդարացրին իրենց: Հանձնարարել կենտրոնական կոմիտեյին՝ հետապնդում և քաղաքական բաժիններ ստեղծել սոցիալիստական չինարարության հետ մնացող ճակատամասերում, դրանք իրենց հարվածային խնդիրները կատարելու համեմատ վերածելով սովետական կուսակցական որդանների՝ կուսույթյան արտադրական-տերիտորիալ հատկանիշով:

Հանձնարարել կենտկոմին՝ ՄՏ կայանների շուրջը տնտեսական նոր կենտրոններ առաջանալու կապակցությամբ՝ ստեղծել նոր ինքնուրույն շրջաններ, կամ ՄՏ կայանների պակաս կարողություն ունեցող կենտրոններում՝ յենթաշրջաններ, իսկ ՄՏ կայանների քաղրա-ժիններն անհրաժեշտության չափով վերակառուցել իր-բն շրջկոմներ կամ յենթաշրջկոմներ:

II

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՑՈՒՄ

ՁՈՒԿՈՒՄԱՐԻԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ

ՇԵՂ ԿՈՒԿՐԵՑ ՂԵՄԱԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ

8. Վերացնել բոլոր խորհրդային-տնտեսական ապարատների կառուցման ֆունկցիանալ սխառմը, այդ ապարատները վերակառուցել արտադրական-տերիտորիալ հատկանիշով՝ սկսած արտադրական ստորին ուղակներից, վերջացրած ժողկոմատներով:

Ժողկոմատների հիմնական որդաններ համարել արտադրական կամ արտադրական-տերիտորիալ գլխավոր վարչությունները, փորձնք պատասխանատու յեն աշխատանքի ալյալ ամբողջ բնադավառի համար և վո-

րոնք իրավունք ու պարտականություններ ունեն իրենց յենթակա կազմակերպությունները ղեկավարելու առանց բացառության բոլոր հարցերում, սահմանափակելով մնացած ֆունկցիանալ սեկտորների իրավունքները, արդելելով նրանց գլխավոր վարչությունների գլխի վրայով ղեկավարելու ստորին ողակները:

9. Պարտավորեցնել խորհրդային-տնտեսական որդանների ղեկավարներին՝ դործնականապես ապահովել յուրաքանչյուր ստորադաս մարմնի կամ ձեռնարկության կոնկրետ ղեկավարությունն առանձին-առանձին, նրանց թերությունները շտկելով աշխատանքի սրտե-սում կիրառած քաղաքակրթ միջոցառումներով և կրնտեղ միջանկյալ ողակների ցանցը (միավորումներ, արեստներ և այլն), բնդարձակելով ժողկոմատների անմիջական կապը խոչորադույն ձեռնարկություններին հետ:

10. Մահմանել պարտականությունների ալելի հրատակ ու խիստ բաշխում ժողկոմատների կենտրոնական ու տեղական որդանների միջև, ուժեղացնել իշխանության մարդային, յերկրային, հանրապետական տեղական որդանների դերն ու պարտականությունները, մտնալանդ տեղական արդյունաբերության և գյուղատեղտեսության դարգացման դործում, ժողկոմատների գլխավոր վարչություններում կենտրոնացնելով մի-միայն իրոք միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունների ղեկավարությունը:

Մարդերում ու յերկրներում ժողկոմատների լիադորների փոխարեն ստեղծել արդյունաբերության ծանրը, թեթև ու մյուս ճյուղերի մարդային, յերկրային վարչություններ, նրանց վրա պարտականություն դնելով կառավարելու ամբողջ տեղական արդյունաբերությունը, միաժամանակ կատարելով համապատասխան ժողկոմի հանձնարարությունները:

Հանձնարարել կենտկոմին՝ կոնկրետորեն մշակել տեղական արդյունաբերության կառավարումը կազմակերպելու և միութենական արդյունաբերական ժողկո-

Տնտեսների տեղերում ունենալիք ներկայացուցչության հարցերը:

11. 1934 թվին բոլոր խորհրդային բյուջետային և անհաշվարկային որդանների հաստիքները կրճատել անվազն 10—15 տոկոսով՝ 1933 թ. նրանց համար սահմանված հաստիքների համեմատությամբ, ինչպես և խիստ կրճատել հաշվառման ու հաշվետվության գոյություն ունեցող ձևերը վերևից մինչև ներքև:

ՂԱՅԱՍՏԻ ԱՂԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԱԿԱՆ ՎՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՍՅՈՒՑՈՒՄԸ
ՅԵՎ ԿԱՐԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԴԵՊՈ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12. Տնտեսական ու խորհրդային ղեկավարներին անձնական պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով՝ կոլեգիաները վերացնել խորհրդային-աբնատեսական աշխատանքի բոլոր ասպարեզներից, բացառությամբ խորհրդային ընտրովի որդանների:

Վերացնել ժողկոմատների կոլեգիաները՝ ժողկոմատի գլուխ թողնելով ժողկոմին և վոչ ավելի քան յերեք տեղակալ: Ժողկոմատներին կից ստեղծել յերկու ամիսը մեկ անգամ գումարվող՝ ժողկոմատների խորհուրդներ՝ 40—70 հոգուց բաղկացած, վորոնց կեսից վոչ պակասը պիտք է լինեն տեղական կազմակերպությունների ու ձեռնարկությունների ներկայացուցիչներ:

Սահմանել, վոր մարդային, յերկրային գործկամների, հանրապետական Ժկն-ների, քաղխորհուրդների նախադահները յերկսից ավելի տեղակալ չպիտք է ունենան:

13. Վերացնել գոյություն ունեցող կառարումն ստուգող հատուկ սեկտորները և առաջարկել կառավարման բոլոր որդանների ղեկավարներին վերևից մինչև ներքև անձնապես ստուգել համայնապատկան որդանների վորոշումների ու կարգադրությունների կառարումը:

14. Անխորդունաբերություն և յերկաթուղային տրանսպորտի որինակով՝ ժողովրդական տնտեսու-

թյան և պետական կառավարման բոլոր ճյուղերում ապահովել ինժեներ-տեխնիկական կադրերի տեղափոխումը գրասենյակից արտադրություն:

15. Աշխատանքի վարձատրության տարիքները վերահասուցել ախպես, վոր խթանի անձիջակներին ցեխի, աշխատամասի, արտադրության մեջ աշխատելը:

Ինժեներ-տեխնիկական բոլոր ազնիվ, հմուտ աշխատողների համար, անկախ կուսակցականությունից, ապահովել արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և այլ ասպարեզներում իշխող, պատասխանատու գիրքերում ամենալայն չափով առաջ պիտք է հետափութությունը: Կազմակերպել աշխատողների տեխնիկական և գործարար վերակի պարսադիր ստուգում տնտեսացիոն-ստուգիչ հանձնաժողովների միջոցով՝ անկախ կուսակցականությունից:

Պարտադրել տնտեսական որդանների ու ձեռնարկությունների ղեկավարներին՝ տիրապետելու իրենց գործի տեխնիկայի հիմունքներին: մշակել արդյունաբերության և ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ճյուղի տեխնիկական այն միևնաժամ, վորը բոլոր ղեկավար աշխատողները պիտք է պարտադրաբար ուսումնասիրեն վորոշակի նվազագույն ժամկետում:

ՏԵՂԱՍՏԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ՊՐՈՑԵՍՈՒՄԱՅ ՅԵՎ ԿՈՍՏԵՐՈՍԱԿԱՆ
ԿԱՏԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՐ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՏՈՍԻ ԲԱՐԵՎԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

16. Կազմակերպել կառավարման մարմինների աշխատանքի մասնայական վերահսկողությունը և մասնների խիստ ըննադատություն տակ դնել ապարատի բյուրոկրատական խոցերն ու թերությունները:

Ընդարձակել խորհուրդների սեկցիաների, պատգամավորական խմբակների ցանցը ձեռնարկություններում, գյուղերում, իսկ մեծ քաղաքներում կազմակերպել խորհուրդների պարզամտվորների յենթաույնական և տեղամասային խմբակներ, ընդ վորում ա-

ռանձին ուշադրության դարձնել խորհուրդների ու նրանց սեկյւրանների աշխատանքում ախտիվ կանանց, բանվորուհիներին ու կուլտնատեսուհիներին ներգրավելու վրա:

17. Արհմիություններին հանձնել ԲԳՏ ստորին որգանների բոլոր իրավունքները ձեռնարկություններում և բանմատակարարման բաժիններին, բանվորական փակ կոոպերատիվներին, չրջսպառկոոպներին, քաղաքակոոպներին կից գործող վերահսկիչ մարմինների ղեկավարումը:

Ծախսել ու վորակապես բարձրացնել ձեռնարկություններին՝ իրեն արգարացրած շեֆությունը պետական հիմնարկների նկատմամբ և արտադրության մեջ աշխատելու սոցիալիստական համատեղությունը պետական հիմնարկներում աշխատելու հետ:

Վերականգնել կոմյերիտական «թեթև հեծելազորին» կազմակերպման իրեն արգարացրած պրակտիկան, վորը հաջողությամբ հայտարարում էր աղարատի բյուրոկրատական թերությունները: Բարձրացնել կոմյերիտմիության բջիջների աշխատանքի վորակը պետական հիմնարկներում՝ պետապարատի բարելավման գործում:

III

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՐԱՏՈՐ
ՎԵՐԱՀՍԿՐՈՒԹՅԱՆ ՌԵՎԵԼԱՑԻԱՆ ԱՍՊԻՐԱՆԻ

18. Կառավարության վորոշումների կատարման վերահսկողությունն ուժեղացնելու և խորհրդային կարգապահությունը ամրապնդելու նպատակով՝ անհրաժեշտ համարել կիրառելու հետևյալ կազմակերպական ձեռնարկումները:—

ա) ԽՍՀ Միության ԺԿԽ-ին կից գոյություն ունեցող Կատարման Հանձնաժողովը վերափոխել կուսակցության համագումարի կողմից նշվող և ԽՍՀՄ Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի կողմից հաստատվող

ԽՍՀՄ-ին կից Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի, վորը կենտրոնում ունենալու յե իր ապարատը և հանրապետություններում, յերկրներում, մարզերում՝ իր մշտական ներկայացուցիչները, վորոնց նշանակում և հետ և կանչում Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովը:

բ) Վերացնել ԲԳՏ Ժողկոմատը, վորն արդեն կատարել և իր դրական դերը, նրա ապարատը հանձնել ԽՍՀ Միության ԺԿԽ-ի կից Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովին:

գ) Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի ղեկավար նշանակել ԽՍՀ Միության ԺԿԽ-ի նախագահի տեղակալներին մեկին:

19. Կուսակցության և Համ Կ(բ)Կ կենտկոմի վորոշումների կատարման վերահսկողությունն ուժեղացնելու, կուսակցական կարգապահությունն ամրապնդելու, կուսակցական եթիկայի խախտումների դեմ պայքարելու նպատակով՝ անհրաժեշտ համարել կիրառելու հետևյալ կազմակերպական ձեռնարկումները:

ա) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը վերափոխել կուսակցության համագումարի կողմից ընտրվող Համ Կ(բ)Կ կենտկոմից կից Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի, վորը կենտրոնում ունենալու յե իր ապարատը, և հանրապետություններում, յերկրներում, մարզերում՝ իր մշտական ներկայացուցիչները, վորոնց նշանակում ու հետ և կանչում Համ Կ(բ)Կ կից գործող Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովը:

բ) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի ապարատը հանձնել Համ Կ(բ)Կ կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին:

գ) Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի ղեկավար նշանակել Համ Կ(բ)Կ կից քարտուղարներից մեկին:

Կուսակցութեան XVII համագումարը սրբապատկարեցնում է բոլոր կոմունիստներին, վորտեղ ել վոր նրանք աշխատելիս լինեն, ապահովել ներկա վորոշման մեջ նշված ձեռնարկումների կատարումը պրոլետարական դիկտատուրայի բոլոր որդանների կազմակերպական մերակառուցման և աշխատանքի բարելավման գործում:

Կուսակցութեան համագումարը նախագիտւշացնում է կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոմյերիտական և այլ կազմակերպութիւնների բոլոր աշխատողներին ու առաջին հերթին կոմունիստներին, վոր լավագոյն աշխատողներին խրախուսելով, կուսակցութեան կենտրոնը և խորհրդային ղեկավար որդաններն ամեն տեսակի դիրքերից հանելու յեն ու ստորին դիրքերում նշանակելու և խստորեն տույժի յեն յենթաբնակելու բոլոր այն աշխատողներին, առանց անձնավորութիւնները հաշիւի առնելու, վորոնք կխախտեն կուսակցական և խորհրդային կարգապահութիւնը:

Կուսակցութեան XVII համագումարը վստահ է, վոր մեր կուսակցութեան անդամները կգտնվեն իրենց խնդիրների բարձրութեան վրա, իրենց ակտիւութեամբ կողնեն կուսակցութեանն ու կատարութեանը՝ պրոլետարական դիկտատուրայի ասարատները մաքրելու բյուրոկրատական թերութիւններէ, կամ բացեն պրոլետարիատի դիկտատուրան, ել ամելի կբարձրացնեն կուսակցութեան ղեկավար դերը և յերկրի համար կապահովեն յերկրորդ հնգամյակի լիակատար հաղթանակը:

10 փետրարի 1934 թ.

ԿՍՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՌՈՒԹՅՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇ.) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիա

(Միաձայն րոյտնված և Համ Կ(բ)Կ XVII համագումարի կողմից)

Համամիութենական Կոմունիստական (բոլշեխիկներ) կուսակցութիւնը, լինելով Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀՄ պրոլետարիատի առաջադր, կազմակերպված ջոկատն է, նրա դասակարգային կազմակերպութեան բարձրագոյն ձևը:

Կուսակցութիւնն իրագործում է պրոլետարիատի, աշխատավոր դյուղացիութեան և բոլոր աշխատավոր մասաների ղեկավարումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի համար, սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում:

Կուսակցութիւնը ղեկավարում է պրոլետարական դիկտատուրայի բոլոր որդանները և ապահովում է սոցիալիստական հասարակութեան հաջող կառուցումը:

Կուսակցութիւնը պրոլետարական դիտակից յերկաթակուռ կարգապահութեամբ շաղկապված միասնական մարտական կազմակերպութիւն է: Կուսակցութիւնն ուժեղ է իր համախմբվածութեամբ, կամքի միասնութեամբ և գործողութիւնների միասնութեամբ: վորոնք անհամատեղելի յեն ծրագրից նահանջելու, կուսակցական կարգապահութիւնը խախտելու և կուսակցութեան ներսում ֆրակցիոն խմբավորումների հետ:

Կուսակցութիւնն իր անդամներից պահանջում է ակտիւ և անձնվեր աշխատանք՝ իրագործելու կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը, կատարելու կուսակցութեան և նրա որդանների բոլոր վորոշումները:

ըր, ապահովելու կուսակցութեան շարքերի միասնականութիւնը և ամրացնելու յեղափոխական, ինտերնացիոնալ հարաբերութիւնները թե՛ ԽՍՀՄ ազգութիւնների աշխատավորների միջև և թե՛ աշխարհի բոլոր յերկրների պրոլետարների հետ:

I

ԿՈՒՍԱԿԿՈՒԹՅԱՆ ԱՆԳԱՄԱՆԵՐԻ
ՅԵՂ. ՆՐԱՆՑ ՊԵՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցութեան անդամ է համարվում ամեն վոք, ով ընդունում է կուսակցութեան ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպութիւններից մեկի մեջ, յենթադրվում է կուսակցութեան վորոշումներին և մութում է անդամավճար:

2. Կուսակցութեան անդամը պարտավոր է.

ա) սրահպանել կուսակցական խտառույն կարգապահութիւն, ախտիվորեն մասնակցել կուսակցութեան ու յերկրի քաղաքական կյանքին, գործնականում կրթառել կուսակցութեան քաղաքականութիւնը և կուսակցական որդանների վորոշումները.

բ) անդուլ աշխատել իր գաղափարական գինվածութիւնը բարձրացնելու, մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, կուսակցութեան կարևորագույն քաղաքական ու կազմակերպական վորոշումները յուրացնելու համար և բացատրել դրանք անկուսակցական մասսաներին.

գ) վորպէս Խորհրդային պետութեան մեջ կառավարող կուսակցութեան անդամ՝ որինակ լինել աշխատանքային ու սրտական կարգապահութեան սրահպանման, տիրանալ իր գործի տեխնիկային, անընդհատ բարձրացնելով իր աքտադրական, գործնական վորակավորումը:

3. Անդամների ընդունելութիւնը կուսակցութեան մեջ կատարվում է բացառապէս անհատական կարգով: Նոր անդամներ ընդունվում են այն թեկնածուների թրվից, վորոնք անցել են սահմանված թեկնածուական

ստաժը, ընտրական գրադիտութեան դպրոցը և յորացրել են կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը: Կուսակցութեան անդամ են ընդունվում բանվորները, կոլտնտեսականները, կարծիք բանակայինները, ուսանողները և ծառայողները, վորոնք ցույց են տվել իրենց համակրողների խմբակներում, խորհուրդներում, արհմիութիւններում, կոմյերիտիւթեան մեջ, կոոպերացիայում, սպառումավորական ժողովներում իրենց կատարած աշխատանքով, այն կազմակերպութեան կարծիք-անհատականն առանալուց հետո, վորտեղ աշխատել է կամ աշխատում է ընդունվողը:

Թեկնածուներից կուսակցութեան անդամ ընդունելու կարգը հետևյալն է.

ա) Սահմանվում է չորս կատեգորիա.— 1) վոչ սրահպան քան 5 տարիա արտադրական ստաժ ունեցող արդյունաբերական բանվորներ. 2) 5 տարուց պակաս արտադրական ստաժ ունեցող արդյունաբերական բանվորներ, գյուղատնտեսական բանվորներ, բանվորների ու կոլտնտեսականների շարքերից յեւած կարմիք բանակայիններ և անմիջականորեն ցեխում կամ աշխատանքում աշխատող թեժենեք-տեխնիկական աշխատողներ. 3) կոլտնտեսականներ, անալիտագործական-արհմատագործական արտիկների անդամներ և տարրական դպրոցի ուսուցիչներ. 4) միացած ծառայողները:

բ) Կուսակցութեան մեջ ընդունվելու համար առաջին կատեգորիային պատկանող անձինք ներկայացնում են կուսակցական հնդամ յա ստաժ ունեցող կուսանդամների յերեք յերաշխավորութիւն. յերկրորդ կատեգորիային պատկանող անձինք— կուսակցական հնդամ յա ստաժ ունեցող կուսանդամների հինգ յերաշխավորութիւն և ՄՏ կայանի քաղբաժնի կամ շրջկոմի ներկայացուցչի յերաշխավորութիւնը:

չորրորդ կատեգորիային ստանկանող անձինք — տաս-
նամյա կուսստաթ ունեցող կուսանդամների հինգ յե-
րաշխավորութուն:

Մանրություն. — Կոմյերիսմիությունից
կուսակցութեան անդամ ընդունելիս՝ բոլոր կա-
տեգորիաների համար Համ ՀԿՅԵՄ չըջանային կո-
միտեյի յերաշխավորությունը համադրեցվում է
կուսակցութեան յերկու անդամի յերաշխավորու-
թյան:

դ) Այլ կուսակցություններից յեկածներն ընդուն-
վում են բացառիկ դեպքերում՝ կուսակցութեան հինգ
անդամի յերաշխավորությամբ, վորոնցից յերեքը առ-
օր տարվա կուսստաթով, իսկ յերկուսը՝ մինչհեղափո-
խական կուսստաթով, վորչ այլ կերպ, քան արտադրական
սկզբնական կազմակերպութեան միջոցով, անպայման
Համ Կ(բ)Կ Կենտկոմի հաստատումով, անկախ ընդուն-
վողի սոցիալական դրությունից:

Մանրություն. — Կենտկոմը կարող է այլ
կուսակցություններից յեկածներին վերջնականա-
պես կուսակցութեան անդամ հաստատելու իրա-
վունքը տալ առանձին յերկրային և մարդային
կուսակցական կոմիտեներին և աղջային կոմկուս-
ների կենտկոմներին:

զ) Յերաշխավորությունների ստուգումը նախոր-
դում է ընդունելությանը և կազմում է տեղական կու-
սակցական կոմիտեյի պարտականությունը:

է) Կուսակցութեան մեջ ընդունելու հարցը նա-
խապես քննում է սկզբնական կուսակցական կազմա-
կերպությունը, վճռում է կազմակերպութեան ընդհա-
նուր ժողովը և ուժի մեջ է մտնում առաջին ու յերկրորդ
կատեգորիաների համար՝ չըջկոմի կամ քաղկոմի հա-
ստատումից հետո, իսկ յերրորդ և չորրորդ կատեգո-
րիաների համար՝ մարքկոմի, յերկրկոմի կամ աղջային
կոմկուսի Կենտկոմի հաստատումից հետո:

զ) Մինչև քսան տարեկան ներառյալ յերիսու-

տարդները կուսակցութեան մեջ մտնում են միայն Համ.
ԼԿՅԵՄ-ի միջոցով:

4. Յերաշխավորները պատասխանատու յեն իրենց
յերաշխավորյալների համար և անհիմն յերաշխավո-
րություն տված լինելու դեպքում՝ յենթարկվում են
կուսակցական տույժերի՝ ընդհուպ մինչև կուսակցու-
թյունից վտարելը:

5. Թեկնածուներից կուսակցութեան անդամ ըն-
դունվողների կուսակցական ստաթը հաշվվում է այն
որից, յերբ համադրատասխան կուսակցական սկզբնա-
կան կազմակերպութեան ընդհանուր ժողովը վորոշում
է ընդունում տվյալ ընկերոջը կուսակցութեան անդամ
հաստատելու մասին:

6. Մի կազմակերպութեան ամեն մի անդամ մի ու-
րիշ կազմակերպութեան աշխատանքի չըջանը տեղա-
փոխվելու դեպքում վերջինիս կողմից մտցվում է իր
անդամների թվի մեջ:

Մանրություն. — Կուսակցութեան անդամ-
ների մի կազմակերպությունից մյուսը փոխադրե-
վելը տեղի յե ունենում Համ Կ(բ)Կ Կենտկոմի սահ-
մանած կանոնների համաձայն:

7. Կուսակցութեան այն անդամներն ու թեկնա-
ծուները, վորոնք յերեք ամսվա ընթացքում առանց
հարգելի պատճառների չեն վճարել անդամավճարները,
համարվում են կուսակցությունից դուրս մնացած, վո-
րի մասին հայանվում է սկզբնական կազմակերպու-
թեան անդամների ընդհանուր ժողովին:

8. Վորեւ սեկին կուսակցությունից վտարելու
հարցը վորոշում է այն կազմակերպութեան ընդհանուր
ժողովը, վորի անդամն է տվյալ անձնավորությունը, և
առաջին ու յերկրորդ կատեգորիաների համար հաստա-
տում է մարզային կամ յերկրային կոմիտեն, իսկ յեր-
րորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ չըջանային
կամ քաղաքային կոմիտեն, ըստ վորում տվյալ անձնա-
վորությունը կուսակցական կազմակերպութեան ընդ-
հանուր ժողովի կամ կուսակցական կոմիտեյի կողմից

Հասարակու ռից հեռացվում և հուսակցական աշխատանքից: Կուսակցությունից վտարված անդամների մասին հրապարակվում և կուսակցական մամուլում, վտարման պատճառի մատնանշումով:

9. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պարբերական վորոշումներով կատարվում են զուտմենք՝ կուսակցությունը սխառնմանիկ կերպով մաքրելու համար՝

զասակարգայնորեն խորթ և թշնամի ապրերից:

յերկերեսանիններից, վորոնք խաբում են կուսակցությանը, թաղցնում են նրանից իրենց խկական հայացքները և վիժեցնում են կուսակցության քաղաքականությունը:

կուսակցության ու պետության յերկաթի կարգապահությունը բացահայտ կամ քողարկված ձևով խախտողներից:

բուրժուական տարրերի հետ սերտանվող աշխատելով:

կարյերիստներից, մորթապաշտներից և բյուրոկրատացած տարրերից:

բարոյապես քայքայվածներից, վորոնք իրենց անվայելուչ վարքագծով դցում են կուսակցության արժանապատվությունը, աքատալորում են կուսակցության դրոշը:

պասսիվներից, վորոնք չեն կատարում կուսակցության անդամի պարտականությունները և չեն յուրացրել կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և կարևորագույն վորոշումները:

II

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Կուսակցության մեջ մտնել ցանկացող բոլոր անձինք անցնում են թեկնածուական ստաթ, վորի նպատակն և նրանց հիմնավորապես ծանոթացնել կուսակցության ծրագրին, կանոնադրությանն ու տակտիկային և ստուգել թեկնածուի անձնական հատկությունները:

11. Թեկնածու ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանելը, յերաշխալորությունների բնույթը և նրանց ստուգումը՝ կադմակերպության վորոշումը ընդունելության մասին և կուսկոմի կողմից հաստատվելը) բոլորովին նույնն և, ինչ վոր կուսակցության անդամ ընդունելիս:

12. Թեկնածուական ստաթ սահմանվում է՝ առաջին կատեգորիայի համար մի տարեկ, յերկրորդ, յերրորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ յերկու տարի:

Ծանոթություն.— Այլ կուսակցություններից յեղածները, անկախ իրենց սոցիալական դրությունից, անցնում են թեկնածուական յեռոմյա ստաթ:

13. Կուսակցության անդամության թեկնածունեքը մասնակցում են այն կադմակերպության ժողովներին, վորին նրանք պատկանում են, խորհրդակցական ձայնի իրավունքով:

14. Թեկնածուները մուծում են սովորական անդամավճար տեղական կուսակցական կոմիտեյի դրամարկղը:

III

ՀԱՄԱՌՈՐՈՆԵՐԻ ԵՄԲԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15. Կուսակցությանն ամենամոտ անկուսակցական ակտիվիստներին, վորոնք գործով՝ արտադրության մեջ ցույց են տվել իրենց նվիրվածությունը կուսակցությանը, բայց դեռ նախապատրաստված չեն կուսակցության մեջ ընդունվելու համար, Համ Կ(բ)Կ չուրքը կադմակերպելու նպատակով՝ սկզբնական կուսակցական կադմակերպություններին կից ստեղծվում են Համ Կ(բ)Կ համակրողների խմբակներ, վորոնք անպայման յենթարկվում են կուսակցության որդանների բոլոր վորոշումներին:

16. Համակրողների խմբակների մեջ ընդունելությունը կատարվում և գործարանային, հիմնարկային և այլ կուսակցական կոմիտեների, ՄՏ կայանների:

խորհրդանշանությունների և յերկաթուղային տրանսպորտի քաղաքափնջների վորոշումներով, կուսակցության յերկու անդամի յերաշխափորությամբ:

17. Համ Կ(բ)Կ Համակրողների խմբակներում կազմակերպվածները պարտափոր են հաճախել և կուսակցական դռնբաց ժողովները, վորտեղ նրանք առտրվում են խորհրդակցական ձայնի իրավունքով, ալտիփորեն պաշարել կուսակցության և կառավարության վորոշումների կատարման համար, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ սխատեմատիկ կերպով աշխատել իրենց դադափարական քաղաքական մակարդակը բարձրացնելու համար:

IV

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

18. Կուսակցության կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը գեմոկրատական ցենտրալիզմն է, վորը նշանակում է՝

ա) կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտրականությունը՝ վերից վար:

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվետվությունն իրենց կուսակցական կազմակերպությունների առաջ:

գ) կուսակցական խիստ կարգապահություն և փոքրամասնության յենթարկվելը մեծամասնության:

դ) բարձրագույն որդանների վորոշումների անսլայման պարտադիր լինելը ստորին որդանների և կուսակցության բոլոր անդամների համար:

19. Կուսակցությունը կառուցվում է գեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով քստ տերիտորիալ արտադրական հատկանիշի. վորեն չըջան սպասարկող կազմակերպությունը վերադաս է համարվում տվյալ չըջանի մի մասն սպասարկող բոլոր կազմակերպությունների նկատմամբ, կամ վորեն արտադրության կամ կառավարչության ամբողջ ճյուղն սպասարկող կազմակերպությունը վերադաս է համարվում տվյալ

ճյուղի մալերն սպասարկող բոլոր կազմակերպությունների նկատմամբ:

20. Կուսակցական բոլոր կազմակերպություններն ալտոնոմ են տեղական հարցերը լուծելիս, վորչափով ալդ վորոշումները չեն հակասում կուսակցության վորոշումներին:

21. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար որդանն է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը:

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը նրանց գործադիր որդանն է և ղեկավարում է կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

23. Կուսակցության կազմակերպման սխեման հետեյալն է՝

ա) ԽՍՀՄ տերիտորիալ — Համամիութենական համագումար — Համ Կ(բ)Կ Կենտկոմ:

բ) մարզեր, յերկրներ, հանրապետություններ — մարդային, յերկրային կոնֆերենցիաներ, ազգային կոմիտեների համագումարներ — մարդկոմներ, յերկրկոմներ, ազգային կոմիտեների կենտկոմներ:

գ) քաղաքներ, չըջաններ — քաղաքային ու չըջանային կոնֆերենցիաներ — քաղաքային ու չըջանային կոմիտեներ:

դ) ձեռնարկություններ, գյուղեր, կոլտնտեսություններ, ՄՏ կայաններ, կարմիր բանակային գործատեր, հիմնարկներ — սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընդհանուր ժողովներ, կոնֆերենցիաներ — սկզբնական կուսակցական կոմիտեներ (գործարանային կուսկոմիտե, ֆարբիկային կուսկոմիտե, կարմիր բանակային գործատաի կուսբյուրո և ալլն):

24. Յենթարկման, հաշվետվության, կուսակցական վորոշումների ընթացքի ու վիճարկման կարգը (վերադաս ինստանցիայից դեպի ստորին ինստանցիա) — Համամիութենական համագումար, Համ Կ(բ)Կ Կենտ

կամ, մարդային-յերկրային կոնֆերենցիա, աղղային կոմկուսների կոնֆերենցիա կամ համալուծար, մարդային, յերկրային կոմիտե, աղղային կոմկուսի Կենտկոմ, քաղաքային-չրջանային կոնֆերենցիա, քաղաքային-չրջանային կոմիտե և այլն:

25. Կուսակցական դիրքեկախներն ու վորոշումներն իրագործելու (և խորհրդային-անտեսական որդանց կատարումն ստուգելու) նպատակով գործնական աշխատանք կատարելու համար՝ մարդկումներում, յերկրկումներում, աղղային կոմկուսների կենտկոմներում, և Համ Կ(ր)Կ կենտկոմում ստեղծվում են ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ:

Համ Կ(ր)Կ կենտկոմում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական, գ) Տրանսպորտային, դ) Ֆինանսին-ֆինանսա-ուսնարական, ե) Քաղաքական-վարչական, զ) Ղեկավար կուսորդաների, է) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, բ) Մարքսի-ենղեյի-լենինի ինտերուսու (ինչպես և 2 սեկտոր՝ Գործերի կատավարչություն և Հատուկ):

Մարդկումներում— յերկրկումներում և աղղային կոմկուսների կենտկոմներում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական-սրանապորտային, գ) Խորհրդային-առևտրական, դ) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, ե) Ղեկավար կուսորդաների (քաղաքային ու չրջանային) և Հատուկ սեկտոր:

Յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում կենտրոնացվում և տվյալ ճյուղի ամբողջ աշխատանքը՝ կազմակերպական-կուսակցական աշխատանք, կադրերի բուխում ու պատրաստում, ալիամասոսայական աշխատանք, արտադրական պրոպագանդ, հսկողություն համապատասխան խորհրդային-անտեսական որդանների և կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վարչումները կատարելու վրա:

26. Կուսակցության յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք ունի ունենալու իր կնիքը, բայց միմիային համապատասխան վերադաս կուսակցական կազմակերպության ստեղծիլով:

Կ

ԿՈՄՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՆՏՐՈՒԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27. Կուսակցության դերաշույն որդանը համապումարն և: Հերթական համապումարները հրավիրվում են վոչ ուշ, քան յերեք տարին մի անգամ: Արտակարգ համապումարները հրավիրում և կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համապումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3 մասի պահանջով: Կուսակցական համապումարի հրավիրումը և որակարգը հայտարարվում և վոչ ուշ, քան համապումարից մեկ ու կես ամիս առաջ: Արտակարգ համապումարները հրավիրվում են յերկու ամսյա ժամանակամիջոցում:

Համապումարը վավերական և համարվում, յեթե նրանում ներկայացված և վերջին հերթական համապումարում ներկայացված կուսակցության բոլոր անդամների կեռից վոչ պակասը:

Կուսակցության համապումարի ներկայացուցչություն նորմաները սահմանում և կենտրոնական Կոմիտեն:

28. Այն դեպքում, յերբ կենտրոնական Կոմիտեն 27-րդ կետում մատնանշված ժամանակամիջոցում չհրավիրի արտակարգ համապումար, արտակարգ համապումարի հրավիրումը պահանջող կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու կազմակերպական կոմիտե, վորն ոգտվում և կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով արտակարգ համապումար հրավիրելու հարցում:

29. Համապումարը՝

ա) լսում և հաստատում և կենտրոնական Կոմիտեն:

յի, Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի, Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի և այլ կենտրոնական կազմակերպութիւնների հաշվետու-
թիւնները:

բ) վերանայում և փոփոխում և կուսակցութեան
ծրագիրն ու կանոնադրութիւնը:

գ) վորոշում և կուսակցութեան տակտիկական դիմ-
քննութեան քաղաքականութեան հիմնական հարցերի վե-
րաքննարկ:

դ) ընտրում և Կենտրոնական Կոմիտեն, Կուսակցա-
կան Վերահսկողութեան Հանձնաժողով, Կենտրոնա-
կան Վերստուգիչ Հանձնաժողով և նշում և խորհրդա-
յին Վերահսկողութեան Հանձնաժողովի կազմը՝ ՍՍՀՄ,
Կենտրոնական և Ժողովրդավարական հաստատմանը ներկա-
յացնելու համար:

30. Կենտրոնական Կոմիտեն և մյուս կենտրոնական
կազմակերպութիւններն ընտրվում են համադրումարի
սահմանած կազմով: Կենտրոնական Կոմիտեյի անդամ-
ների հեռանալու դեպքում, Կենտկոմի կազմը լրացվում
և համադրումարի ընտրած թեկնածուներից՝ համադրու-
մարի սահմանած կարգով:

31. Կենտրոնական Կոմիտեն թունվազն մի պլենար
նիստ և ունենում 4 ամիսը մեկ անգամ: Կենտկոմի պլե-
նումների նիստերում Կենտկոմի անդամութեան թեկ-
նածուները ներկա չեն լինում խորհրդակցական ձայնի
իրավունքով:

32. Կենտրոնական Կոմիտեն կազմակերպում և
քաղաքական աշխատանքի համար՝ Քաղաքական բյու-
րո, կազմակերպական աշխատանքի ընդհանուր ղեկա-
վարման համար՝ Կազմակերպական բյուրո և կազմա-
կերպական ու գործադիր բնույթ կրող ընթացիկ աշխա-
տանքի համար՝ Քարտուղարութիւն:

33. Կենտրոնական Կոմիտեն համադրումարների
միջև ընկած ժամանակամիջոցում ղեկավարում և կու-
սակցութեան ամբողջ աշխատանքը, ներկայացնում և
կուսակցութիւնը՝ այլ կուսակցութիւնների, կազմա-

կերպութիւնների և հիմնարկների հետ ունեցած հա-
րաբերութիւններում, կազմակերպում և կուսակցա-
թեան զոնալան հիմնարկներ և ղեկավարում և նրանց
գործունեյութիւնը, նշանակում և կենտրոնական որ-
դանների խմբագրութիւնները, վորոնք աշխատում են
նրա վերահսկողութեամբ, և հաստատում և տեղական
խոշոր կազմակերպութիւնների կուսակցական որդան-
ների խմբագիրներին, կազմակերպում և ղեկավարում
և հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնար-
կութիւնները, բաշխում և կուսակցութեան ուժերն ու
միջոցները և վարում և կենտրոնական դրամարկը:

Կենտրոնական Կոմիտեն ուղղութիւն և տալիս
կենտրոնական խորհրդային և հասարակական կազմա-
կերպութիւնների աշխատանքին՝ նրանցում յեղած
կուսակցական խմբակներ միջոցով:

34. Բոլշեիկյան ղեկավարութիւնն ու քաղաքա-
կան աշխատանքն ուժեղացնելու նպատակով, Կենտրո-
նական Կոմիտեն իրավունք ունի ստեղծել քաղաքական
բաժիններ և ջոկել Կենտկոմի կուսակցական կազմա-
կերպիչներ սոցիալիստական շինարարութեան հետ մնա-
ցող այն ճակատամասերում, վորոնք առանձնապես
կարևոր նշանակութիւն են ստանում Ժողովրդական
տնտեսութեան ու ամբողջ յերկրի համար, ինչպես նաև,
յերբ քաղաքական բաժինները կատարում են իրենց
հարմար լին խնդիրները՝ վերածել դրանք արտադրա-
կան-տեխնիկալ հատկանիշով կառուցված րոմլորական
կուսակցական որդանների:

Քողրածիններն աշխատում են համապատասխան
արտադրական կուսակցական կոմիտեների իրավունք-
ներով և ղեկավարվում են անմիջականորեն Համ Կ(բ)Կ
Կենտկոմի կողմից Կենտկոմի արտադրական-ճյուղային
բաժինների միջոցով, կամ հատկապես կազմակերպ-
ված քաղվարչութիւնների ու քաղտեխտորների միջո-
ցով:

35. Կենտրոնական Կոմիտեն պարբերաբար իրա-

վիճի և դարձնում կուսակցական հարմակերպություններն և բնի իր աշխատանքի մասին:

36. Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովը՝

ա) վերահսկում է կուսակցության և Համ Կ(բ)Կ Կենտկոմի վորդումների կատարմանը:

բ) պատասխանատվության և կանչում կուսակցական կարգապահությունը խախտող մեղավորներին:

գ) պատասխանատվության և կանչում կուսակցական ետիկան խախտող մեղավորներին:

37. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը վերստուգում է՝ ա) գործերի ընթացքի արագությունն ու ճշտությունը կուսակցության կենտրոնական որդաններում և Համ Կ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարության ապարատի կանոնավորությունը: Բ) Համ Կ(բ)Կ Կենտկոմի դրամարկղը և ձեռնարկությունները:

VI

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ—ՄԱՐԶԱՅԻՆ—
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԵՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

38. Մարզային—յերկրային—հանրապետական կուսակցական կազմակերպության բարձրագույն որդանն է մարզային—յերկրային կուսակցական կոնֆերենցիան կամ ազգային կոմկուսի համագումարը, իսկ դրանց միջև ընկած ժամանակամիջոցում՝ մարզային—յերկրային կոմիտեն, ազգային կոմկուսի Կենտկոմը: Իրենց գործունեյության մեջ նրանք ղեկավարվում են Համամիութենական Կոմունիստական Կուսակցության և նրա ղեկավար որդանների ընդհանուր վորդումներով:

39. Հերթական յերկրային—մարզային կոնֆերենցիան կամ ազգային կոմունիստական կուսակցությունների համագումարը հրավիրում է յերկրային—մարզային կոմիտեն—ազգային կոմկուսի Կենտկոմը՝ մեկ ու կես տարին մի անգամ, իսկ արտակարգ կոնֆերենցիան

կամ համագումարը հրավիրվում է յերկրային—մարզային կոմիտեյի—ազգային կոմկուսի Կենտկոմի վորդումը կամ մարզի—յերկրի—հանրապետության մեջ մտնող կազմակերպությունների անդամները ընդհանուր թվի 1/3-ի պահանջով:

Յերկրային—մարզային կոնֆերենցիայի, ազգային կոմկուսի համագումարի ներկայացուցչության նորմաները սահմանում է յերկրային—մարզային կոմիտեն—ազգային կոմկուսի Կենտկոմը:

Յերկրային—մարզային կոնֆերենցիան, ազգային կոմկուսի համագումարը լսում ու հաստատում է յերկրային—մարզային կոմիտեյի—ազգային կոմկուսի Կենտկոմի, Վերստուգիչ Հանձնաժողովի և յերկրային ու մարզային այլ հիմնարկների հաշվետու զեկուցումները, քննարկում է յերկրի—մարզի կամ հանրապետության կուսակցական, խորհրդային, տնտեսական, արհմիութենական աշխատանքի հարցերը և ընտրում է յերկրային—մարզային կոմիտե (հանրապետություններում՝ ազգային կոմկուսի Կենտկոմ), Վերստուգիչ Հանձնաժողով և կուսակցության Համամիութենական համագումարի պատգամավորներ:

40. Յերկրային—մարզային կոմիտեն, իսկ հանրապետություններում՝ ազգային կոմկուսի Կենտկոմը, ընթացիկ աշխատանքի համար ընտրում է համապատասխան գործադիր որդաններ՝ 11 հոգուց վոչ ավելի կազմով, վորոնք հաստատվում են Համ Կ(բ)Կ Կենտկոմի կողմից, և յերկու քարտուղար՝ առաջին և յերկրորդ: Քարտուղարների համար պարտադիր է առնըվազն 12 տարվա կուսակցական ստաժ:

41. Յերկրային—մարզային կոմիտեն—ազգային կոմկուսի Կենտկոմը կազմակերպում է կուսակցության գանազան հիմնարկներ՝ յերկրի—մարզի—հանրապետության սահմաններում, ղեկավարում է նրանց գործունեյությունը, նշանակում է յերկրային—մարզային կուսակցական որդանի խմբադրությունը, վորն աշխատում է նրա վերահսկողության տակ, ղեկավարում է արտա-

կուսակցական կազմակերպութիւններում յեղած կուսակցական խմբակները, կազմակերպում և ղեկավարում է իր այն ձեռնարկութիւնները, վորոնք ընդհանուր նշանակութիւն ունեն մարզի—յերկրի—հանրապետութեան համար, իր կազմակերպութեան սահմաններում բաշխում է կուսակցութեան ուժերն ու միջոցները և վարում է յերկրային—ազգային—հանրապետական կուսակցական դրամարկը:

42. Յերկրային—մարզային կոմիտեյի—ազգային կոմիտեի կենտկոմի պլենումը հրավիրվում է առնվազն յերեք ամիսը մեկ անգամ:

43. Յերկրային ու հանրապետութիւնների կազմի մեջ մտնող ազգային և այլ մարզերի ու ինքնավար հանրապետութիւնների կուսակցական կազմակերպութիւններն աշխատում են յերկրային կոմիտեների—ազգային կոմիտեների կենտկոմների ղեկավարութեամբ և իրենց ներքին կյանքում ղեկավարվում են այն դրոյթներով, վոր շարադրված են կուսակցութեան կանոնադրութեան VI գլխում յերկրային, մարզային և հանրապետական կազմակերպութիւնների մասին:

VII
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ
(ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

44. Քաղաքային—չրջանային կուսակցական կոնֆերենցիան հրավիրվում է քաղաքային—չրջանային կոմիտեյի կողմից վոչ սրկատ, քան տարեկան մի անգամ, արտակարգ կոնֆերենցիան՝ քաղաքային—չրջանային կոմիտեյի վորոշումով կամ քաղաքային—չրջանային կազմակերպութեան մեջ մտնող կազմակերպութիւնների անդամների ընդհանուր թվի $\frac{1}{3}$ -ի սահմանով:

Քաղաքային—չրջանային կոնֆերենցիան յոում և հաստատում է քաղաքային—չրջանային կոմիտեյի, վերստուգիչ հանձնաժողովի ու քաղաքային—չրջանային այլ հիմնարկների հաշվետուութիւնները, ընտրում և

քաղաքային—չրջանային կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և յերկրային—մարզային կոնֆերենցիայի կամ ազգային կոմիտեի համագումարի պատգամավորներ:

45. Քաղաքային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է տասնամյա կուսակցական ստաժ, իսկ չրջանային կոմիտեյի քարտուղարի համար՝ յոթնամյա կուսակցական ստաժ: Քաղաքային և չրջանային կոմիտեների քարտուղարներին հաստատում է մարզկոմը, յերկրկոմը կամ ազգային կոմիտեի կենտկոմը:

46. Քաղաքային—չրջանային կոմիտեն ընտրում է 5—7 հոգուց բաղկացած բյուրո, կազմակերպում ու հաստատում է սկզբնական կուսակցական կազմակերպութիւնները ձեռնարկութիւններում, խորհատեսութիւններում, ՄՏ կայաններում, կոլտնտեսութիւններում և հիմնարկներում, վարում է բոլոր կոմունիստների ցուցակազրումը, կազմակերպում է կուսակցութեան զանազան հիմնարկներ քաղաքի ու չրջանի սահմաններում և ղեկավարում է նրանց գործունեյութիւնը, նշանակում է քաղաքային—չրջանային կուսակցական որդանի խմբադրին, վորն աշխատում է նրա ղեկավարութեամբ ու վերահսկողութեամբ, ղեկավարում է արտակուսակցական կազմակերպութիւնների կուսակցական խմբակներին, կազմակերպում է համաքաղաքային, չրջանային նշանակութիւն ունեցող իր ձեռնարկութիւնները, քաղաքի և չրջանի սահմաններում բաշխում է կուսակցութեան ուժերն ու միջոցները և վարում է քաղաքային—չրջանային դրամարկը: Քաղաքային—չրջանային կոմիտեն յերկրային—մարզային կոմիտեյին—ազգային կոմիտեի կենտկոմին հաշվետուութիւն է ներկայացնում իր գործունեյութեան մասին՝ Համ. Կ(բ)Կ կենտկոմի սահմանած ժամկետներում և ձեռով:

47. Խոշոր քաղաքներում Համ Կ(բ)Կ կենտկոմի թույլտուութեամբ ստեղծվում են քաղաքային կոմիտեյին յենթակա ռայոնական կազմակերպութիւններ:

48. Կուսակցութեան հիմքն են կազմում սկզբնական կուսակցական կազմակերպությունները: Սկզբնական կազմակերպություններն ստեղծվում են ֆաբրիկաներում, գործարաններում, խորհատեսուլթյուններում և տնտեսական այլ ձեռնարկություններում, կուլտեսուլթյուններում: ՄՏ կայաններում, կարմիր բանակային գործառնությունում, գյուղերում, հիմնարկներում և այլն, յերբ կա կուսակցութեան առնվազն յերեք անդամ: Այն ձեռնարկություններում, կուլտեսուլթյուններում, հիմնարկներում և այլն, վորտեղ կուսակցութեան անդամների թիվը յերեքից պակաս է, ստեղծվում են թեկնածուական կամ կուսակցական—կոմյերիտական խմբակներ, վորոնց գլխավորում է շրջկոմներին, քաղկոմների կամ քաղրաժինների կազմից ջոկված կուսկազմակերպիչը: Սկզբնական կուսակցական կազմակերպությունները հաստատում են շրջանային կամ քաղաքային կոմիտեները կամ համապատասխան քաղրաժինները:

49. Խոշոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կուլտեսուլթյուններում և այլն, վորոնք ունեն մեծ թվով կոմունիստներ (100 անդամից մինչև 3000 և ավելի), ամբողջ ձեռնարկությունը, հիմնարկությունը և այլն ընդգրկող ընդհանուր սկզբնական կուսակցական կազմակերպութեան ներսում, յուրաքանչյուր առանձին գեպքում՝ շրջկոմի—քաղկոմի կամ համապատասխան քաղրաժնի հաստատմամբ՝ կարող են կազմակերպվել կուսակցական կազմակերպություններ բոտ ցեխերի, աշխատամասերի, բաժինների և այլն: Ցեխային, աշխատամասային և այլ կազմակերպությունների ներսում իրենց հերթին կարող են ստեղծվել կուսակցական խմբակներ՝ բոտ ձեռնարկութեան բրիգադների, ագրեգատների և այլն:

50. Սկզբնական կուսակցական կազմակերպությունը բանվորական և գյուղացիական մասսաներին

կապում է կուսակցութեան ղեկավար որդանների հետ: Նրա խնդիրն է՝

1) ագիտացիոն և կազմակերպական աշխատանք կատարել մասսաների մեջ հանուն կուսակցութեան լուսնոնների ու վորոշումների:

2) ներգրավել համակրողներ ու նոր անդամներ և նրանց տալ քաղաքական դաստիարակություն:

3) ոժանդակել շրջկոմին—քաղկոմին կամ քաղրաժնին՝ նրա ամենորյա կազմակերպական և ագիտացիոն աշխատանքում:

4) մորթիլդացիայի յենթարկել մասսաներին ձեռնարկություններում, խորհատեսուլթյուններում, կուլտեսուլթյուններում և այլն՝ կատարելու արտադրական պլանը, ամբացնելու աշխատանքային կարգապահությունը և քարգացնելու հարվածայնությունը:

5) պայքար մղել ձեռնարկություններում, խորհատեսուլթյուններում, կուլտեսուլթյուններում թափաթրվածութեան և գործն անտեսաբար վարելու դեմ, ամենորյա հոգատարություն ցույց տալ բանվորների ու կուլտեսուլթյունների կենցաղային պայմանները բարելավելու համար:

6) վորպես կուսակցական որդան՝ ակտիվ կերպով մասնակցել յերկրի քաղաքական ու տնտեսական կյանքին:

51. Ընթացիկ աշխատանքը վարելու համար սկզբնական կուսակցական կազմակերպությունն ընտրում է կուսակցական կոմիտե (ֆարկուսկոմ, գործուսկոմ և այլն) 11 հոգուց վոչ ավելի կազմով, մի տարի ժամանակով, իսկ ցեխային կազմակերպությունն ընտրում է կուսակցական կազմակերպիչ, վորին հաստատում է սկզբնական կուսակցական կոմիտեն:

15 հոգուց պակաս անդամ և թեկնածու ունեցող կուսակցական կազմակերպություններում կուսակցական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ ընտրվում են կուսակցական կազմակերպիչներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեներում, վորոնք

միավորում են կուսակցութեան վոչ ավելի քան 100 անգամ, կուսակցական աշխատանքը վարում են, վորպես կանոն, արտադրութեան մեջ աշխատելուց չազատված աշխատողները: Մինչև 1000 կուսանդամ ընդգրկող կուսակցական կոմիտեներում պետք է աշխատեն արտադրութեան մեջ աշխատելուց ազատված 2—3 վճարովի աշխատողներ: Մինչև 3000 և ավելի անդամ ընդգրկող կուսկոմիտեներում կարող են աշխատել արտադրութեանից ազատված 4—5 ընկերներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեների քարտուղարների համար պարտադիր է առնվազն 3-ամյա կուսակցական ստաժ, իսկ կուսկազմակերպիչների համար՝ 2-ամյա կուսակցական ստաժ:

IX

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Կարմիր բանակի, Կարմիր նավատորմի և ավիացիայի կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարութիւնն իրադրոծում է ԲԳԿԲ Քաղաքական վարչութիւնը, վորն աշխատում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ռազմական բաժնի իրավունքով: ԲԳԿԲ Քաղվարչութիւնն իր ղեկավարութիւնը կենսադրոծում է իր կողմից նշանակվող քաղբաժինների, զինկոմների և համապատասխան բանակային կոնֆերենցիաներում ընտրվող կուսակցական հանձնաժողովների միջոցով:

Կարմիր բանակի, նավատորմի և ավիացիայի կուսկազմակերպութիւններն աշխատում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատած հատուկ հրահանգի հիման վրա:

53. Ոկրուգների, նավատորմերի ու բանակի քաղբաժինների պետերի համար պարտադիր է 10-ամյա կուսակցական ստաժ, զիվիցիաների և բրիգադների քաղբաժինների պետերի համար՝ 6-ամյա կուսակցական ստաժ:

54. Քաղորդանները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ՝ քաղորդանները ղեկավարներին և զինկոմներին (քաղբաժինին

դժով ոգնականների) մշտական մասնակցութեամբ տեղական կուսակցական կոմիտեներում, ինչպես նաև կուսկոմիտեներում քաղորդանների պետերի և զինկոմների (քաղաքական դժով ոգնականների) ղեկուցումները գործադարում կատարվող քաղաշխատանքի մասին սխառեմատիկաբար լսելու միջոցով:

X

ՄՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

55. Արտակուսակցական խորհրդային, արհմիութենական, կոոպերատիվ և այլ մասսայական կազմակերպութիւնների բոլոր համագումարներում, խորհրդակցութիւններում և ընտրովի որդաններում, վորտեղ կա կուսակցութեան առնվազն յերեք անգամ, կազմակերպվում են կուսակցական խմբակներ, վորոնց խնդիրն է բազմակողմանիորեն ուժեղացնել կուսակցութեան ազդեցութիւնը և կիրառել նրա քաղաքականութիւնն արտակուսակցական միջավայրում, ամրապնդել կուսակցական ու խորհրդային յերկաթե կարգապահութիւնը, պայքար մղել բյուրոկրատիզմի դեմ, ստուգել կուսակցական ու խորհրդային դիրեկտիվների կատարումը:

Խմբակն ընթացիկ աշխատանքի համար ընտրում է քարտուղար:

56. Խմբակները, անկախ իրենց նշանակութիւնից, ամբողջովին յենթարկվում են համապատասխան կուսկազմակերպութիւններին (ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, յերկրկոմ, մարզկոմ, ազգային կոմկուսի Կենտկոմ, քաղկոմ, շրջկոմ): Խմբակները բոլոր հարցերում պարտավոր են խտիվ և անչեղ կերպով հետեւել կուսակցական ղեկավար կազմակերպութիւնների վորոշումներին:

57. Կուսակցական քաղաքականութեան հարցերի ազատ և դործարար քննարկումն առանձին կազմակերպութիւններում կամ ամբողջ կուսակցութեան մեջ կուսակցութեան յուրաքանչյուր անդամի անկախութիւնը իրավունքն է, վորը բղխում է ներկուսակցական դեմոկրատիայի հիման վրա հնարավոր է ծափալել բոլընիկյան ինքնաքննադատութիւնը և ամբացնել կուսակցական կարգապահութիւնը, վորը պետք է լինի դիտակցական և վոչ մեխանիկական: Սակայն լայն դիսկուսիան, մանավանդ համաժողովեանական մասշտաբի դիսկուսիան կուսակցական քաղաքականութեան հարցերի շուրջը, պետք է այնպէս կազմակերպւած լինի, վոր նա չհանգեցնի աննշան փոքրամասնութեան փորձերին՝ իր կամքը փաթաթելու կուսակցութեան հսկա մեծամասնութեան վզին, կամ Փրակցիոն խմբավորումներ կազմակերպելու փորձերին, վորոնք ջլատում են կուսակցութեան միասնութիւնը, պառակտում առաջացնելու փորձերին, վորոնք կարող են յերերել սլոլետարիատի դիկտատուրայի ուժն ու տոկոսնութիւնը, ի ուրախութիւն բանավոր դասակարգի թշնամիների: Ուստի համաժողովեանական մասշտաբի լայն դիսկուսիան կարող է անհրաժեշտ համարւել միայն այն դեպքում, յեթե՝ ա) այդ անհրաժեշտութիւնն ընդունում են մարդային կամ հանրապետական մասշտաբի առնվազն մի քանի տեղական կուսկազմակերպութիւններ, բ) յեթե Կենտկոմի ներսում բաժանանաչափ հաստատուն մեծամասնութիւն չկա կուսակցական քաղաքականութեան կարեւորագույն հարցերի շուրջը, դ) յեթե, չնայած Կենտկոմում վորոշ տեսակետի վրա կանգնած հաստատուն մեծամասնութեան գոյութեան, այնուամենայնիվ Կենտկոմն անհրաժեշտ է համարում կուսակցութեան մեջ դիսկուսիոն

քննարկում կատարելու միջոցով ստուգել իր քաղաքականութեան ճիշտ լինելը: Միմիայն այս պայմանները կատարելու դեպքում կարելի յե ապահովել կուսակցութեանը՝ հակակուսակցական տարրերի կողմից ներկուսակցական դեմոկրատիան չաքարկելուց, միմիայն այդ պայմաններով կարելի յե վստահ լինել, վոր ներկուսակցական դեմոկրատիան ոգուտ կրերի դորձին և չի ոգտադործվի ի վնաս կուսակցութեան ու բանվոր դասակարգի:

58. Կուսակցութեան միասնութեան պահպանումը, անողոր կռիւլը Փրակցիոն պայքարի ու պառակտման ամենաչնչին փորձերի դեմ, կուսակցական ու խորհրդային խստագույն կարգապահութիւնը հանդիսանում են կուսակցութեան բոլոր անդամների, բոլոր կուսակցական կազմակերպութիւնների առաջնագույն պարտականութիւնը:

Կուսակցութեան մեջ և ամբողջ խորհրդային աշխատանքում խիստ կարգապահութիւն կիրառելու և ամեն տեսակ Փրակցիոնականութեան վերացումով առավելագույն միասնութեան հասնելու համար ՀամԿ(բ)Կ Կենտկոմն իրավունք ունի՝ կարգապահութիւնը խախտելու կամ թե Փրակցիոնականութիւնը վերստեղծելու կամ թույլ տալու դեպքում՝ կիրառել կուսակցական տույժի բոլոր միջոցները, ընդհուպ մինչև կուսակցութեանից վտարելը, իսկ Կենտկոմի անդամների նկատմամբ՝ թեկնածուների շարքը փոխադրելը և վորպէս ծայրահեղ միջոց՝ կուսակցութեանից վտարելը: Կենտկոմի անդամների, Կենտկոմի անդամութեան թեկնածուների և Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի անդամների նկատմամբ այդպիսի ծայրահեղ միջոց կիրառելու պայմանը պետք է լինի Կենտկոմի պրենումի գումարումը, վորին հրավիրվում են Կենտկոմի անդամութեան բոլոր թեկնածուները և Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի բոլոր անդամները: Յեթե կուսակցութեան ամենաարտոտխանատու զեկավարների այդպիսի ընդհանուր ժողովը ձայների

յերկու յերրորդով անհրաժեշտ կգտնի Կենսակումի կամ Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի անդամներին փոխադրել թեկնածուների շարքը կամ վտարել կուսակցութեանից, ապա այդ միջոցը պետք է իրագործվի անհապաղ:

59. Կուսակցական և խորհրդային կենտրոնների վորոշումները պետք է կատարվեն արագ ու ճշտիվ: Բարձրագույն կազմակերպութեանների վորոշումները չկատարելու և կուսակցութեան հասարակական կարծիքով հանցավոր ճանաչված այլ զանցանքների հետևանքը կլինի—կազմակերպութեան համար՝ պարսավանք և ընդհանուր վերահաշվառում (կազմակերպութեան ցլրումը), կուսակցութեան առանձին անդամների համար՝ պարսավանքի այս կամ այն ձևը (ի տես դնել, նկատողութեան անել և այլն), հրապարակային պարսավանք, ժամանակաշրջանի հեռացնել պատասխանատու կուսակցական և խորհրդային աշխատանքից, վտարել կուսակցութեանից, վտարել կուսակցութեանից՝ հազորդելով զանցանքի մասին վարչական և դատական իշխանութեաններին:

60. Կուսակցութեան տյն անդամները, վորոնք հրաժարվում են Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի հարցերին ճշտորեն պատասխանելուց, պետք է անհապաղ վտարվեն կուսակցութեանից:

XII

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. Կուսակցութեան և նրա կազմակերպութեանների դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից, կուսակցութեան ձեռնարկութեանների յկամուտներից և այլ մուծումներից:

62. Կուսակցութեան անդամների և թեկնածուների համար սահմանվում են ամսական անդամավճարները հետևյալ չափով:

Միևել 100 ռ. աշխատավարձ տուց. վնարում են ռ. 20 կ.

101-ից 150 ռ.	»	»	»	»	»	60 »
151-ից 200 »	»	»	»	»	»	1 ռ.— »
201-ից 250 »	»	»	»	»	»	1 ռ. 50 »
251-ից 300 »	»	»	»	»	»	2 ռ.— »
300-ից քաղաք միևել 500 ռ.	»	»	»	»	»	2 ³ / ₀ » վատակի
500-ից »	»	»	»	»	»	3 ⁰ / ₀ »

63. Մուտքի վճարները գանձվում են թեկնածու ընդունվելիս՝ ստացվող աշխատավարձի 2 տոկոսի չափով:

10 վեպեր 1934 թ.

VII

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՆԳԱՄՆԵՐԸ

- | | |
|----------------------|------------------------|
| 1. Ալեքսեյեվ Պ. Ա. | 33. Կրժիժանովսկի Գ. Մ. |
| 2. Անդրեյեվ Ա. Ա. | 34. Կրինիցկի Ա. Ի. |
| 3. Անտիպով Ն. Կ. | 35. Կրուպակայա Ն. Կ. |
| 4. Բադայեվ Ա. Յե. | 36. Կույբիշեվ Վ. Վ. |
| 5. Բալիցկի Վ. Ա. | 37. Մանուիլսկի Դ. Զ. |
| 6. Բաուման Կ. Յա. | 38. Մեժլաուկ Վ. Ի. |
| 7. Բերիա Լ. Պ. | 39. Միկոյան Ա. Ի. |
| 8. Բուբնով Ա. Ս. | 40. Միրզոյան Լ. Ի. |
| 9. Գամարնիկ ՅԱ. Բ. | 41. Մուրաով Վ. Մ. |
| 10. Զելենսկի Ի. Ա. | 42. Յագոդա Գ. Գ. |
| 11. Եյխե Ռ. Ի. | 43. Յակիր Ի. Ե. |
| 12. Ժգուանով Ա. Ա. | 44. Յակովլեվ Յա. Ա. |
| 13. Ժուկով Ի. Պ. | 45. Յեժով Ն. Ի. |
| 14. Իվանով Վ. Ի. | 46. Յենուկիճե Ա. Ս. |
| 15. Իֆրամով Ամալ | 47. Յեվդակիմով Յե. Գ. |
| 16. Լավրենտյեվ Լ. Ի. | 48. Նիկոլայեվա Կ. Ի. |
| 17. Լեբեդ Դ. Զ. | 49. Նոսով Ի. Պ. |
| 18. Լիսովինով Մ. Մ. | 50. Շերալայեվ Բ. Պ. |
| 19. Լոբով Ս. Ս. | 51. Շվեբնիկ Ն. Մ. |
| 20. Լյաբինով Ի. Յե. | 52. Որչոնիկիճե Գ. Կ. |
| 21. Խասայեվիչ Մ. Մ. | 53. Ուլանով Կ. Վ. |
| 22. Խրուշչեվ Ն. Ս. | 54. Զերնով Մ. Ա. |
| 23. Կաբակով Ի. Դ. | 55. Զուբար Վ. Յա. |
| 24. Կազանովիչ Լ. Մ. | 56. Զուլիբին Մ. Յե. |
| 25. Կազանովիչ Մ. Մ. | 57. Զուրով Մ. Ս. |
| 26. Կալինին Մ. Ի. | 58. Պյատակով Յու. Լ. |
| 27. Կիրով Ս. Մ. | 59. Պյատնիցկի Ի. Ա. |
| 28. Կնեքին Վ. Գ. | 60. Պետրովսկի Գ. Ի. |
| 29. Կոդացկի Ի. Յ. | 61. Պոստիշեվ Պ. Պ. |
| 30. Կոսարեվ Ա. Վ. | 62. Ռազունով Մ. Ո. |
| 31. Կոսիոր Ի. Վ. | 63. Ռինդին Կ. Վ. |
| 32. Կոսիոր Ս. Վ. | 64. Ռուճուտակ Յա. Ե. |

65. Ռումյանցեվ Ի. Պ.
66. Ռուխիմովիչ Մ. Լ.
67. Սուլիմով Դ. Յե.
68. Սապին Ի. Վ.

69. Ստեցկի Ա. Ի.
70. Վարեյկին Ի. Մ.
71. Վորոշիլով Կ. Յե.

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՆԳԱՄՆԻԹՅԱՆ ԹԵԿՆԱՄՈՒՆԵՐԸ

- | | |
|-----------------------|------------------------|
| 1. Շուբրիկով Վ. Պ. | 35. Պապով Ն. Ն. |
| 2. Գրյադինսկի Յ. Պ. | 36. Շվարց Ս. |
| 3. Կամինսկի Գ. Ն. | 37. Վեզեր Յե. Ի. |
| 4. Պախով Ն. Ի. | 38. Յուրկին Տ. Ա. |
| 5. Յերյամին Ի. Գ. | 39. Գիկար Ն. Յ. |
| 6. Խայեվ Ու. Դ. | 40. Մեյսլիս Լ. Զ. |
| 7. Մուսաբեկով Գ. | 41. Պուլիսա Վ. Վ. |
| 8. Սմոլոգին Պ. Ի. | 42. Ուզարով Ա. Ի. |
| 9. Միխայլով Վ. Մ. | 43. Սարգիսով Ս. Ա. |
| 10. Սարուպե Պ. Ի. | 44. Բլազոնրավով Գ. Ի. |
| 11. Տուլաուլսա Ի. Պ. | 45. Ռոզենգույց Ա. Պ. |
| 12. Ռեշիլստ Ի. Ս. | 46. Սեդեյնիկով Ա. Ի. |
| 13. Բլյուխեր Վ. Կ. | 47. Յեզուով Ա. Ի. |
| 14. Կուրիցին Վ. Ի. | 48. Սերբերովսկիյ Ա. Պ. |
| 15. Բուլգանին Ն. Ա. | 49. Բուդյոննիյ Ս. Մ. |
| 16. Բրկին Յա. Բ. | 50. Դեմչենկո Ն. Ն. |
| 17. Բուլին Ա. Ս. | 51. Պուկրեբիշեվ Ա. Ն. |
| 18. Սեմյոնով Բ. Ա. | 52. Զատոնսկիյ Վ. Պ. |
| 19. Կալիգինա Ա. Ս. | 52. Շտեյնգարդս Ա. Մ. |
| 20. Կուկով Մ. Մ. | 54. Ֆիլատով Ն. Ա. |
| 21. Կալմանովիչ Մ. Ի. | 55. Կոմարով Ն. Պ. |
| 22. Լեպա Ա. Կ. | 56. Պավլոնովսկի Ի. Պ. |
| 23. Լոգովսկի Ս. Ա. | 57. Սոկոլնիկով Գ. Յա. |
| 24. Բագիրով Մ. Դ. | 58. Բրոյդո Գ. Ի. |
| 25. Տուխաչեվսկի Մ. Ն. | 59. Բուխարին Ն. Ի. |
| 26. Մակարով Ի. Գ. | 60. Պուլսկի Վ. Ի. |
| 27. Միխայլով Մ. Յե. | 61. Ուբորեվիչ Ի. Պ. |
| 28. Պոզերն Բ. Պ. | 62. Կուրյակ Ն. Ա. |
| 29. Ելիավա Շ. Զ. | 63. Վեյդերբրգ Գ. Դ. |
| 30. Գուդեդ Ն. Մ. | 64. Գրինկո Գ. Յ. |
| 31. Դերբբա Տ. Դ. | 65. Ռիկով Ա. Ի. |
| 32. Զավենյագին Ա. Պ. | 66. Լյուբչենկո Պ. Պ. |
| 33. Ռսինսկիյ Վ. Վ. | 67. Տոմսկի Մ. Պ. |
| 34. Ստրիկովսկի Կ. Կ. | 68. Պրամենկ Ե. Կ. |

ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

- | | |
|------------------------|-----------------------|
| 1. Կազանովիչ Լ. Մ. | 32. Լիչեվ Ի. Ա. |
| 2. Յեժով Ն. Ի. | 33. Մեյերգոմ Ժ. Ի. |
| 3. Շկիրյատով Մ. Ֆ. | 34. Մոսկատով Գ. Գ. |
| 4. Յարուսլավսկի Յեմ. | 35. Մուրուզով Ի. Վ. |
| 5. Ակուլով Ի. Ա. | 36. Ոսմով Ն. Մ. |
| 6. Պետերս Յա. Խ. | 37. Պոսպելով Պ. Ն. |
| 7. Բուլատով Դ. Ա. | 38. Պասյարդե Լ. Ա. |
| 8. Ակուլինուշչին Պ. Դ. | 39. Պշենիցին Կ. Ֆ. |
| 9. Բեկկեր Ի. Մ. | 40. Պետրովսկի Ա. Ն. |
| 10. Բեքեզին Ն. Ս. | 41. Ռաբիչեվ Ն. Ն. |
| 11. Բոգուշևսկի Վ. Ս. | 42. Ռուբենով Ռ. Գ. |
| 12. Բրիկկե Ս. Կ. | 43. Ռուբինշտեյն Մ. Ի. |
| 13. Զայիկին Ա. Տ. | 44. Սախարովա Պ. Ֆ. |
| 14. Բուխարին Կ. Ի. | 45. Սախյանովա Մ. Մ. |
| 15. Վասիլյեվ Ս. Վ. | 46. Ստավսկի Վ. Պ. |
| 16. Վոլկով Վ. Լ. | 47. Ստեպանով Մ. Տ. |
| 17. Գենկին Յե. Բ. | 48. Սալտանով Ս. Ա. |
| 18. Գրանովսկի Մ. Լ. | 49. Սորոկին Մ. Լ. |
| 19. Գրաման Վ. Յա. | 50. Տյոմկին Մ. Մ. |
| 20. Դավիդսոն Ռ. Յե. | 51. Ֆրենկել Ա. Ա. |
| 21. Դվինսկի Բ. Ա. | 52. Խավկին Ս. Տ. |
| 22. Ժուկովսկի Ս. Բ. | 53. Զուրին Յա. Ա. |
| 23. Զայցեվ Ֆ. Ի. | 54. Շադունց Ս. Կ. |
| 24. Զաշիբաշև Ա. Ս. | 55. Շարանգովիչ Վ. Ֆ. |
| 25. Զիմին Ն. Ն. | 56. Շարուրովա Մ. Ա. |
| 26. Կարավայեվ Պ. Ն. | 57. Շեստակով Վ. Ի. |
| 27. Կախիանի Մ. Ի. | 58. Շոխին Ա. Պ. |
| 28. Կորոտկով Ի. Ի. | 59. Շուստին Ա. Յա. |
| 29. Կուրա Տ. Ֆ. | 60. Յուրեվիչ Ե. Ի. |
| 30. Կուլբիշև Ն. Վ. | 61. Յակովլև Ս. Ի. |
| 31. Լեվին Ա. Ա. | |

ԿՈՐԵՐԳՅՈՒՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ


- | | |
|---------------------|---------------------|
| 1. Կուլբիշև Վ. Վ. | 10. Մոսկովին Ի. Մ. |
| 2. Անսիպով Ն. Կ. | 11. Ռոյզենման Բ. Ա. |
| 3. Բեշենկի Ջ. Մ. | 12. Բոգդանով Ի. Ա. |
| 4. Անցելովիչ Ն. Մ. | 13. Բազիլեվիչ Գ. Դ. |
| 5. Դաշստեր Ա. Ի. | 14. Բաուեր Յա. Յա. |
| 6. Պրոկոֆյեվ Գ. Յե. | 15. Բուխանով Ա. Ա. |
| 7. Լոմով Գ. Ի. | 16. Բալախնին Ս. Մ. |
| 8. Յիլսոն Ա. Մ. | 17. Բուկաարյ Վ. Լ. |
| 9. Զեմլյաչկա Ռ. Ս. | 18. Բոգատ Ա. Պ. |

- | | |
|-------------------------|----------------------|
| 19. Վոզնեսենսկի Ն. Ա. | 45. Մելամեդ Գ. |
| 20. Վեյդերաուս Ե. Ի. | 46. Մորգունով Ն. Ս. |
| 21. Վենգերովա Ռ. Ս. | 47. Մեժլաուկ Ի. Ի. |
| 22. Գեմմերովսո Մ. Ի. | 48. Նագաբեքյան Հ. Մ. |
| 23. Գինդին Յա. Ի. | 49. Ուրալով Ս. Գ. |
| 24. Գեյ Կ. Վ. | 50. Գուսեվ Ա. Ն. |
| 25. Գլաշտեյն Յու. Մ. | 51. Ուլինցեվ Մ. Կ. |
| 26. Գուլիչ Լ. Յե. | 52. Վեկետով Ի. Գ. |
| 27. Գեյչ Մ. Ա. | 53. Պիլայեվ Գ. Ն. |
| 28. Գոգաղով Ա. Ի. | 54. Պետրովիչեվ Ի. Ա. |
| 29. Յեգորով Վ. Ն. | 55. Պրոնին Ի. Ս. |
| 30. Ժուչայեվ Դ. Ա. | 56. Պասկուցկի Ն. Ա. |
| 31. Իլյին Ն. Ի. | 57. Ռեմեյկո Ա. Գ. |
| 32. Իվանով Ն. Գ. | 58. Ռոգիս Ա. Ռ. |
| 33. Իվանով Ա. Ա. | 59. Ռեմիզով Մ. Պ. |
| 34. Կարպով Վ. Ի. | 60. Ռոմանովսկի Վ. Ի. |
| 35. Կարլիկ Ա. Ի. | 61. Սուլովսկի Ֆ. Վ. |
| 36. Կիսսիս Ռ. Յա. | 62. Սարեյցով Գ. Մ. |
| 37. Կրիվին Մ. Գ. | 63. Սուլչին Ս. Կ. |
| 38. Կոզմովսկայա Ա. Յա. | 64. Տրիխեր Մ. Ա. |
| 39. Կալաշնիկով Վ. Ս. | 65. Տեբելով Ռ. Յա. |
| 40. Կորաստաշևսկի Ի. Յե. | 66. Ուլյանովա Մ. Ի. |
| 41. Սոմ Կ. Պ. | 67. Ֆեյզին Վ. Գ. |
| 42. Մալցև Կ. Ա. | 68. Յարյով Պ. Ս. |
| 43. Մանգրեդ Ս. Ա. | 69. Շարիլեվսկի Գ. Վ. |
| 44. Միրոշնիկով Ի. Ի. | 70. Խախանյան Գ. Գ. |

ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

- | | |
|-----------------------|--------------------|
| 1. Վլադիմիրսկի Մ. Ֆ. | 12. Արոնշտամ Լ. Ն. |
| 2. Ռյաբինին Յե. Ի. | 13. Սոյգեր Յա. Գ. |
| 3. Կիսելյով Ա. Ս. | 14. Սլեֆեյել Ի. Ի. |
| 4. Շելիսեն Ի. Ս. | 15. Կոզան Յե. Ս. |
| 5. Զուցկայեվ Ս. Յե. | 16. Խանջյան Ա. Ղ. |
| 6. Որախեյաշվիլի Մ. Գ. | 17. Ֆոմին Վ. Կ. |
| 7. Կրուտով Գ. Մ. | 18. Պասկ Յա. Ա. |
| 8. Ադորատսկի Վ. Վ. | 19. Տեբրանով Մ. Ն. |
| 9. Խոլայանկին Մ. Ի. | 20. Պեվզնյակ Պ. Մ. |
| 10. Սուխովին Կ. Վ. | 21. Ռեդեն Ս. Ֆ. |
| 11. Ագրանով Յա. Ս. | 22. Յանսոն Ն. Մ. |

- I. Համ Կ (բ) Կ XVII համագումարի բանաձևն ընկ. Ստա-
լինի հաշվետու գեկուցման առթիվ՝ Համ Կ (բ) Կ ԿԿ աշ-
խատանքի մասին 3
- II. Համ Կ (բ) Կ XVII համագումարի բանաձևը Կենտրոնա-
կան վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվության
առթիվ »
- III. Համ Կ (բ) Կ XVII համագումարի բանաձևը ընկ. Ռու-
ճուտակի հաշվետու գեկուցման առթիվ՝ ԿՎՀ—ԲԳՏ աշ-
խատանքի մասին 4
- IV. Համ Կ (բ) Կ XVII համագումարի բանաձևը ընկ. Մա-
նուիլսկու հաշվետու գեկուցման առթիվ՝ Համ Կ (բ) Կ
պատգամավորության աշխատանքի մասին ԿԻԳԿ-ում »
- V. ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսության զարգացման յերկ-
րորդ հնգամյա պլանի մասին (1933—1937 թ. թ.) :
Համ Կ (բ) Կ XVII համագումարի բանաձևն ընկ. ընկ.
Վ. Մուրտովի և Վ. Կույբիշևի գեկուցման առթիվ 8
- VI. Կազմակերպական հարցեր (կուսակցական և խորհրդա-
յին շինարարություն) : Համ Կ (բ) Կ XVII համագումարի
բանաձևն ընկ. Լ. Կազանովիչի գեկուցման առթիվ 41
- Կանոնադրություն Համամիութենական կոմունիստական
(բոլշևիկների) կուսակցության : Ինտերնացիոնալի սեկ-
ցիա 59
- VII. Կուսակցության ղեկավար որգանների կազմը 84



564

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.



РЕЗОЛЮЦИИ
XVII СЪЕЗДА ВКП (б)

Партиздат ССРА. Эривань 1934

ՀՀ Ազգային գրադարան



NL0182347

